Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

331.88
Ա-57

# ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ԱՐՀՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ IV ՅԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐՀՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ VI

## ՀԱՄԱԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՎՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԽ-Ի

ՅԵՐԵՎԱՆ 1929 թ.

13 FEB 2013

2 FEB 2010

331.88
Ա-57

# ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ԱՐՀՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ IV ՅԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐՀՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ VI ՀԱՄԱԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՎՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԽ-Ի

ՅԵՐԵՎԱՆ 1929 թ.

Ա. Մյասնիկյանի
16020-57

24378

ԳՐԱՌԵՊԳԼԽՎԱՐ 1758 (բ) ՊԱՏ. № 2299
ՏԻՐԱԺ—1000
ՀԱՅՊՈԼԻԳՐԱՖԻ I ՏՊԱՐԱՆ

# ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ԱՐՀՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ IV ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ՎՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

## ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ԱՐՀՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԱՌԹԻՎ

### Ա. ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՌԹԻՎ

1. ԱԽՖՍՀ ժողովրդական տնտեսության զարգացումը, շինարարության թափի արագացումը և իբրև դրա հետևանք բանվորական ուժի քանակական աճումը արտադրության մեջ և արհմիությունների անդամների թվի ավելացումը Անդրկովկասի արհմիությունների առաջ խնդիր են դնում ուժեղացնել արհմիությունների անդամների լայն մասսաների տնտեսա-կենցաղային և կուլտ-կրթական կարիքների ու պահանջների բազմակողմանի սպասարկումը:

Արհմիությունների Անդրկովկասյան III համագումարից ընկած Անդրկովկասի արհեստակցական կազմակերպությունները ունեցել են զգալի նվաճումներ միությունների անդամների արհմիութենական սպասարկության, արհմիութենական ակտիվի քանակական և վորակային աճման, տեղերում մասսայական աշխատանքի ուժեղացման և խորացման ասպարեզում, հիմնվելով արհմիութենական դեմոկրատիայի մեթոդների լայն կիրառման վրա բոլոր արհմիութենական մարմիններում և իրենց ամբողջ աշխատանքը անց կացնելիս հաշվի առնելով արհմիությունների անդամների առանձին ազգային խմբերի հատուկ առանձնահատկությունների և կուլտ-կենցաղային պահանջների բազմակողմանի սպասարկության անհրաժեշտությունը:

2. ԱԽՖՍՀ բոլոր արհեստակցական կազմակերպությունները պետք է ուժեղացնեն պայքարը միութենական կազմակերպությունների մեջ հայտնաբերվող թերությունների դեմ մասսայական աշխատանքի և արհմիութենական դեմոկրատիայի կիրառման ասպարեզում: Այս առթիվ անհրաժեշտ է ուշադրություն դարձնել՝

ա) արհմիության անդամների լայն մասսաները մասնակից դարձնելու գործարկոմների և տեղկոմների հաշվետվությունների քննության, ապահովելով արհմիութենական մարմինների աշխատանքի առողջ քննադատության հնարավորությունը արհմիությունների անդամների կողմից·

բ) ամբողջ ընտրական կազմը նորով փոխարինելուց խուսափելուն, անշեղ կերպով ներգրավելով արհեստակցական կազմակերպությունների ակտիվի մեջ միությունների անդամների նոր կադրեր·

գ) արհմիութենական մարմինների բոլոր օղակների աշխատանքն ավելի հասարակական հիմունքների վրա կառուցելու, ընտրական մարմինների ավելի կոլեկտիվության ու պատասխանատվության և արհմիությունների լայն մասսաների առաջ ավելի հաճախ հաշվետու լինելու վրա·

դ) խոշոր ձեռնարկությունների մեջ բանվորներին բազմակողմանի կերպով սպասարկելու նպատակով միութենական աշխատանքի ծանրության կենտրոնը դեպի ցեխերն ու հերթափոխները (смена) փոխադրելուն և ցեխբյուրոյի աշխատանքի ղեկավարությունը ուժեղացնելուն, թույլ չտալով՝ այդ ցեխբյուրոների մեկուսացումը·

ե) արհեստակցական աշխատանքի ուժեղացմանը բանվորների տեղից տեղ փոխադրվող խմբակների մեջ և նրանց ակտիվ հասարակական աշխատանքների մասնակից անելուն·

զ) կամպանիաների, ինչպես և, ըստ հնարավորության, զանազան ժողովների, նիստերի և այլն, իրական կրճատմանը, նախատեսելով այդպիսիները միութենական մարմինների աշխատանքի ծրագրերի մեջ·

է) ընդհանուր, պատգամավորական և ցեխային ժողովների օրակարգում այդ ժողովների կողմից առաջները կայացրած վորոշումների կատարման և կամ չկատարելու պատճառները դնելուն:

3· Անհրաժեշտ է, վոր արհմարմինները ամենամեծ ուշադրությունը նվիրեն բանվորների նոր կադրերի սպասարկությանը՝ նրանց դասակարգային գիտակցությունը մինչև արդյունաբերական բանվորների հիմնական կադրերի մակարդակը բարձրացնելու նպատակով:

4· Արձանագրությունների ուղարկումը վերացնելու և գրավոր հաշվետվությունը կրճատելու կապակցությամբ՝ անհրաժեշտ



է ավելի ևս ուժեղացնել կենդանի կապը, ձգտելով արհմիութենական մարմինների ապարատը մաքսիմալ չափով մասսաներին մոտեցնել: Միաժամանակ անհրաժեշտ է ուժեղացնել ստորև կանգնած մարմինների աշխատանքի ղեկավարությունը հետազոտումների միջոցով, լավացնելով այդ հետազոտումների վորակն ի հաշիվ նրանց քանակի:

Տեղերում աշխատանքի ղեկավարությունն ուժեղացնելու նպատակով անհրաժեշտ է միջմիութենական և միութենական արհկազմակերպությունների ղեկավար աշխատողների կանոնավոր այցելությունը ստորև կանգնած արհկազմակերպություններին՝ վերջիններիս հրահանգելու համար:

5· Ստորին արհմիութենական ակտիվի քանակային աճումը պրոֆկազմակերպությունների առաջ խնդիր է դնում այդ ակտիվը բազմակողմանի կերպով դաստիարակելու և նրան գործնական արհմիութենական աշխատանքի համար նախապատրաստելու, վորի համար համագումարը անհրաժեշտ է համարում գործադրել պրոֆակտիվի ժողովներ և խորհրդակցություններ՝ ինչպես ներմիութենական կարևորագույն խնդիրների, այնպես և վերև կանգնած պրոֆմարմինների հիմնական դիրեկտիվների կամ վորոշումների մշակման համար, նմանապես և մշտական արհմաշխատանքի համար չկապված պրոֆակտիվին պարտավորեցնել կոնկրետ հանձնարարություններ ու առաջադրություններ կատարելու, այդ ակտիվը մասնակից դարձնելով գործարկոմների և տեղկոմների, հանձնաժողովների և այլն աշխատանքներին:

Անհրաժեշտ է Համարհմխորհի առաջ հարց բարձրացնել պատգամավորական և ցեխային ակտիվի լիազորության գոյություն ունեցող վեցամսյա ժամկետը փոփոխելու և նրանց լիազորության մի տարվա ժամկետ սահմանելու մասին:

6· Նշելով վոր ԱԽՖՍՀ պրոֆկազմակերպությունների աշխատանքի անցած շրջանը ունեցել է պարզորոշ նվաճումներ արհմիության անդամ բանվոր յերիտասարդության և կանանց հատուկ կարիքները և պահանջները սպասարկելու ասպարեզում, համարել, վոր այստեղ արհկազմակերպությունների խնդիրներն են՝

ա) վճռականորեն անց կացնել այդ աշխատանքը միութենական բոլոր մարմինների ապարատով.

բ) տեղերի հրահանգման ուժեղացումը և միութենական մարմինների նիստերին յերիտասարդության և կանանց մեջ տարվող աշխատանքի մասին ավելի հաճախ զեկուցումներ և հարցեր դնել·

գ) գործարկոմների, տեղկոմների և ցեխբյուրոների աշխատանքը հարմարեցնելը յերիտասարդության և կանանց ամենալրիվ սպասարկությանը, նրանց մեջ տարվող աշխատանքը համարելով ընդհանուր աշխատանքի օրգանական մաս:

Միութենական ապարատի կրճատումն անցկացնելու ժամանակ թույլ չտալ կոմսոմոլի վճարովի ներկայացուցչի կրճատում այնտեղ, ուր այդ ներկայացուցչությունը, նկատի առնելով յերիտասարդության մեծ քանակը, գործնական աշխատանքի համար անհրաժեշտ է:

7. Գտնելով, որ ճարտարապետական-տեխնիկական սեկցիայի աշխատանքի մեջ նկատվում է մեկուսացում ընդհանուր միութենական աշխատանքից, անհրաժեշտ է ուժեղացնել արհմիութենական մարմինների ուշադրությունը և ղեկավարությունը այդ սեկցիաների աշխատանքի նկատմամբ, ամեն կերպ այդ սեկցիաները գործունյա մասնակից դարձնելով միությունների տնտեսական և կուլտուրական աշխատանքին, միաժամանակ նրանց վերապահելով ինքնագործունեության արտահայտման մաքսիմալ հնարավորությունը իրենց առօրյա աշխատանքի ընթացքում:

8. Արձանագրելով, որ արհմիութենական աշխատանքը մասնավոր և կոնցեսիոն ձեռնարկներում բավարար չէ, անհրաժեշտ համարել, որպեսզի արհմիութենական մարմինները ուժեղացնեն այդ ձեռնարկների բանվորներին սպասարկելու և դասակարգայնորեն դաստիարակելու աշխատանքը, ինչպես և անհրաժեշտ միջոցներ ձեռք առնեն նրանց ներգրավելու միութենական և ուրիշ աշխատանքի մեջ, ջոկելով այդ ձեռնարկներում աշխատելու համար ամենից պատրաստված և դասակարգայնորեն—կայուն պրոֆաշխատողների:

Անթույլատրելի համարել պետական ձեռնարկներում գործադրվող արհմիությունների աշխատանքի մեթոդը շաբլոն կերպով դեպի մասնավոր և կոնցեսիոն ձեռնարկների աշխատանքը տեղափոխելը:

9. Արհմիությունների անդամների գործադրկությունը կայուն բնույթ է կրում, հակառակ արտադրության ընդլայնման և նրա մեջ բանվորական նոր կադրերի ընդգրկման, ուստի արհմիությունների կարևորագույն խնդիրներից մեկը պետք է լինի գործադուրկների կազմակերպչական-կուլտուրական կարիքների սպասարկության և նրանց ցույց տրվող նյութական օժանդակության ուժեղացման աշխատանքը:



10. Արհմիությունների կողմից անց կացվող առաջքաշման աշխատանքը մինչև այժմ կանոնավոր և սիստեմատիկ բնույթ չի կրել, մասնավորապես չի դրվել առաջքաշվածների հաշվառումը, նկատվել է պարալելիզմ առաջքաշման աշխատանքում և այլն: Առաջքաշման ամբողջ աշխատանքը արհմիություններին հանձնելու կապակցությամբ, անհրաժեշտ է մաքսիմալ չափով ուժեղացնել արհմիությունների աշխատանքն այդ ասպարեզում, կարգավորել առաջքաշվածների սիստեմատիկ և կանոնավոր հաշվառումը, հանրապետությունների մեջ կազմակերպել կուրսեր առաջքաշվածների գիտելիքների մակարդակը բարձրացնելու համար:

Համագումարն անհրաժեշտ է համարում, որ Անդրարհմխորհը ստեղծի առաջքաշվածների պահեստ՝ արտադրության մեջ գրավված բանվորներին պլանաչափ կերպով Անդրկովկասյան հիմնարկությունները և ձեռնարկությունները վարչական, տնտեսական, խորհրդային և կոոպերատիվ աշխատանքի առաջ քաշելու համար:

11. Հավանություն տալով Հողանտառմիության ձեռք առած միջոցներին միութենական մարմինների գյուղական ցանցի կազմակերպչական կառուցվածքը պարզեցնելու ասպարեզում, համագումարը հերթական խնդիր է համարում միության մեջ ընդգրկելը գյուղի այն բոլոր վարձու բանվորներին, որոնք իրավունք ունեն միության անդամ լինելու, նրանց տնտեսական և կուլտուրական—կենցաղային շահերի պաշտպանության ուժեղացումը և գործնական աշխատանքի մեջ ներմիութենական դեմոկրատիայի լրիվ կիրառումը:

12. Նշելով, որ սեզոնային բանվորների սպասարկությունը պրոֆկազմակերպությունների կողմից բավարար չէ, համագումարը առաջարկում է հատուկ ուշադրություն դարձնել սեզոնային բանվորների սպասարկմանը նրանց աշխատանքի շրջանում և գործնական ցուցմունքներ տալ սեզոնային բանվորներին սպասարկելու աշխատանքի վերաբերյալ նրանց գործադրկության շրջանում:

13. ԽՍՀՄ-ի արհմիությունների VII համագումարի ցուցմունքը միությունների մեջ արտադրական սեկցիաներ կազմակերպելու մասին թույլ է կիրառվում. ուստի և անհրաժեշտ է, որպեսզի ԱԽՖՍՀ պրոֆկազմակերպությունները նախաձեռնություն հանդես բերեն արտադրական սեկցիաներ կազմակերպելու խնդրում և այդ հարցը դնեն վերև կանգնած համապատասխան պրոֆկազմակերպությունների առաջ:

14. Նշելով, վոր պրոֆկազմակերպությունների ֆինանսական դրությունը անցած ժամանակաշրջանում նշանակալից կերպով լավացել է, արհմիութենական միջոցների ծախսումը, իբրև կանոն, կատարվում է ըստ նախահաշիվների և այլն, Համագումարն անհրաժեշտ է համարում, վոր բոլոր պրոֆկազմակերպությունները, յելնելով արհմիութենական դանձարկղների միասնականության սկզբունքից, իսկապես վոր անցնեն միասնական նախահաշիվներ և ֆինանսական հաշվետվություններ կազմելուն հանրապետական մասշտաբով:

Միաժամանակ Համագումարն անհրաժեշտ է համարում վարչա-տնտեսական ծախսերի, անձնական կազմը պահպանելուն հատկացրած ծախսերի հետագա կրճատումը և ընդհանուր միութենական միջոցներից միության անդամների կուլտուրական սպասարկության և գործազուրկներին նյութական օժանդակություն ցույց տալուն հատկացված բաժնի ավելացումը: Միութենական ապարատի վրա ծախսվող միջոցները կրճատելու նպատակով, անհրաժեշտ համարել մանր միութենական կազմակերպությունների տեխնիկական ապարատի միացումը:

Նկատի առնելով, վոր վերջերս պրոֆկազմակերպությունների ուշադրությունը դեպի այն պայքարը, վոր պետք է տարվի արհմիութենական միջոցների հետ անփույթ կերպով վարվելու և զեղծարարությունների դեմ, թուլացել է, վերջիններս նորից տեղի ունեն, ուստի և Համագումարը անհրաժեշտ է համարում նորից ուժեղացնել պայքարը զեղծարարությունների դեմ: Արձանագրելով, վոր զեղծարարության վերաբերող մի շարք գործերի առթիվ դատարանները վոչ համապատասխան վորոշում են կայացնել, Համագումարը ԱՍՖՍՀ հանրապետությունների ուշադրությունն է հրավիրում դեպի զեղծարարները ավելի խիստ վերաբերմունք ցույց տալու անհրաժեշտության վրա, անկախ վատնած գումարների մեծությունից և այդպիսիները մարելուց:

15. Արձանագրելով ինֆորմացիոն աշխատանքի թուլությունը Անդրկովկասյան պրոֆկազմակերպությունների մեջ, անհրաժեշտ համարել, վորպեսզի պրոֆկազմակերպությունները ձեռք առնեն ամենակտրուկ միջոցները ինֆորմացիոն աշխատանքի մասշտաբը ընդլայնելու և նրա վորակը լավացնելու համար: Ինֆորմացիոն աշխատանքի բովանդակությունը չպետք է սահմանափակվի միայն պրոֆաշխատանքի առանձին հարցերի հանրագումարը տալով, այլ պետք է հաշվի առնի նաև արհմիությունների անդամների լայն



մասսաների պահանջները, ցանկությունները և տրամադրությունները:

16. Արձանագրելով վիճակագրական աշխատանքի ընդլայնումը և վորակի լավացումը, Համագումարը գտնում է, վոր անհրաժեշտ է պահպանել Կենտվիճվարի, Աշխժողկոմատի և Արհմխորհի աշխատանքի վիճակագրության բյուրոների միասնությունը, վորոնց գոյությունը թույլ է տվել կոնտակտ ստեղծել և վերացնել աշխատանքի այդ ասպարեզում յեղած պարալելիզմը:

Միաժամանակ անհրաժեշտ է ձևակերպել և ամրացնել արհմխորհուրդների և Անդրկովկասյան Արհմխորհուրդի վիճբաժինները, ուժեղացնելով նրանց կողմից վո՛չ միայն միությունների կազմակերպչական, այլ և կուլտ և տարիֆ-տնտեսական աշխատանքի ընդգրկումը:

Համագումարը դեմ է արտահայտվում վիճակագրական մարմիններն արտապլանային հետազոտումներով ծանրաբեռնելու, վիճակագրական հաշվետվությունները ներկայացնելու համար սահմանված ժամկետները փոփոխելու և այլն դեպքերին, վորոնք տեղի յեն ունեցել և անհրաժեշտ է համարում հետագայում ևս կրճատել և պարզեցնել վիճակագրական հաշվետվության ձևերը:

17. Յերկաթուղայինների միության աշխատանքի մեջ Անդրկովկասում նկատվում է ավելորդ կենտրոնացում և ընդհանուր միութենական աշխատանքից մեկուսացում:

Պահպանելով Անդրկովկասյան յերկաթուղիների ամբողջ միութենական աշխատանքի միասնական ղեկավարությունը Դորպրոֆսոժի ձեռքում, անհրաժեշտ է Ուչկպրոֆսոժներին վերապահել ավելի մեծ նախաձեռնություն և ինքնուրույնություն նրանց աշխատանքի ընթացքում, վորը կնպաստի Ուչկպրոֆսոժների պատասխանատվության բարձրացմանը թե միության անդամների լայն մասսաների առաջ և թե Դորպրոֆսոժի առաջ:

Համագումարը անհրաժեշտ է համարում, վորպեսզի Անդրարհմխորհը ուժեղացնի ղեկավարությունը Դորպրոֆսոժի նկատմամբ, իսկ Հանրապետական Արհմխորհները՝ համապատասխան Ուչկպրոֆսոժների նկատմամբ՝ ՀԱՄԿԽ-ի գոյություն ունեցող կանոնադրությունների հիման վրա:

Դորպրոֆսոժը, Ուչկպրոֆսոժը և յերկաթուղայինների միության տեղական մարմինները պետք է ուժեղացնեն իրենց կապը և հաշվետվությունը իրենց աշխատանքի մասին համապատասխան միջմիութենական կազմակերպությունների (Անդրարհմխորհի, Հանրապետական Արհմխորհների, Գավպրոֆբյուրոների) առաջ:

18. Արձանագրելով, որ Անդրարհմխորհի կատարած հետազոտությունների փորձը լավ արդյունքներ է տվել տեղերում միութենական աշխատանքի թերությունները հայտնաբերելու գործում, համագումարը գտնում է, որ Անդրարհմխորհը, կապակցելով և համաձայնեցնելով Հանրապետական Արհմխորհների և միությունների կենտկոմների հետ, պետք է տեղերում միութենական կազմակերպությունների անմիջական հետազոտման աշխատանք տանի, որի համար Անդրարհմխորհին կից պետք է ստեղծվի որակյալ, տեղական լեզուներին տիրապետող հրահանգչական ապարատ:

19. Հաջող գտնելով Անդրարհմխորհի Անդրկովկասյան խորհրդակցություններ հրավիրելու փորձը թե՛ ըստ աշխատանքի առանձին ճյուղերի և թե՛ ըստ առանձին միութենական կազմակերպությունների, անհրաժեշտ է, որ Անդրարհմխորհը պլանային կարգով հրավիրի՝

ա) խորհրդակցություններ Հանրապետական Արհմխորհների և միությունների Անդրկովկասյան վարչությունների ներկայացուցիչների կուլտուրական, տարիֆ-տնտեսական և կազմակերպչական աշխատանքի շուրջը:

բ) խորհրդակցություններ Խորհծառի, Լուսաշխի, Տեղտրանսպորտի, Բժշկասանիտարական միությունների Հանրապետական կենտվարչությունների կանոնավոր կերպով, իսկ մյուս միություններինը ըստ հարկի:

20. Անհրաժեշտ համարել Անդրարհմխորհի կազմը հասցնել 45 անդամի և 19 թեկնածուի հաշվով և պլենումը այսուհետև հրավիրել կանոնավոր կերպով ոչ պակաս քան 3 ամիսը մեկ անգամ:

## Բ. ԿՈՒԼՏ-ԿՐԹԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՌԹԻՎ

21. Բազմազգյան Անդրկովկասի պայմաններում, ուր ամբողջ միութենական աշխատանքը պետք է լինում մեծ քանակությամբ լեզուներով տանել, ուր կան պրոլետարիատի ամենատարբեր խավեր ըստ կենցաղային պայմանների՝ հողատիրության և սեզոնային բանվորների նշանակալից կազմով և արտադրության մեջ առաջին անգամ մասնակցող բանվորներով ու բանվորուհիներով, միությունների կուլտ-լուսավորչական աշխատանքը նշանակալից չափով բարդանում է և ամբողջ միութենական աշխատանքի մեջ առաջնակարգ տեղ պետք է բռնի:



Միութենական կուլտաշխատանքի հիմնական խնդիրն է հանդիսանում սոցիալիստական շինարարության խնդիրների պարզաբանումը և լայն բանվորական մասսաների ներգրավումն այդ շինարարության մեջ:

Անհրաժեշտ է ամեն կերպ լավացնել ամբողջ կուլտ-աշխատանքի որակն ու իդեոլոգիական կայունությունը, որը հաճախ հետ է մնում բանվորների հետզհետե աճող կուլտուր-քաղաքական պահանջներից, և չթուլացնել միութենական կուլտաշխատանքը հանդստի, զվարճալիքների և ֆիզդաստիարակության ասպարեզում, որոնք առաջվա նման պետք է մնան միութենական կուլտաշխատանքի հիմնական մասերից մեկը:

Պրոֆկազմակերպությունները պետք է նմանապես ուժեղացնեն կուլտ-լուսավորչական աշխատանքի համար արտադրության մեջ գրավված և լայն բանվորական մասսաների պահանջներն ու կարիքներն իմացող բանվորներից ակտիվ պատրաստելու աշխատանքը:

22. Արհմիությունների ամբողջ կուլտ-լուսավորչական աշխատանքի հիմնական բազան պետք է հանդիսանա բանվորական ակումբը: Այն ինչ, ակումբային ցանցի պակասությունը ԱԽՖՍՀ-ում, ակումբային շենքերի մեծ մասի անբավարար վիճակը խոչընդոտներ են ստեղծում ակումբային աշխատանքի նորմալ ընթացքի դեմ, ուստի և համագումարը գտնում է, որ ԱԽՖՍՀ-ի պրոֆկազմակերպությունների հատուկ ուշադրությունը պետք է դարձվի աշխատանքի առաջիկա շրջանում նոր ակումբների շինարարության վրա, խուսափելով ծավալով փոքր ակումբներ շինելուց:

Նկատի առնելով մանր (անդամների թվով) միությունների առկայությունը, նպատակահարմար գտնել նրանց միացումը միատեղ ընդհանուր ակումբներ շինելու համար:

Հանձնարարել Անդրարմխորհին Անդրկովկկասի կառավարական մարմինների առաջ հարց հարուցել բյուջեյի մեջ մտցնել բանվորական ակումբներ կառուցելու հատկացրած գումարներ:

Ակումբների մեջ ներգրավված միությունների անդամների թիվը դեռևս անբավարար է: Հատուկ ուշադրություն պետք է նվիրել ակումբների մեջ մեծահասակ բանվորների և բանվորուհիների ներգրավմանը: Բանվորուհիներին (մայրերին) ակումբների աշխատանքում մասնակցություն ցույց տալու հնարավորություն ապահովելու համար, անհրաժեշտ է կազմակերպել և ծավալել երեխաների սենյակների աշխատանքը:

Ամբողջ ակումբային աշխատանքի հիմքում պետք է դրվի մասսայական աշխատանքը: Ակումբները պետք է ձգտեն մասսայական աշխատանքով ընդգրկել ակումբների, ինչպես և միությունների հնարավորին չափ շատ անդամներ:

Ընդունելով, վոր ակումբների գեղարվեստական աշխատանքը վորակային տեսակետից հարկ յեղած բարձրության վրա չի գտնվում, Համագումարն անհրաժեշտ է համարում լուրջ ուշադրություն դարձնել ակումբային դրամատիկական, յերաժշտական, յերգեցիկ և այլ խմբակների աշխատանքի վորակը լավացնելու վրա, բանվորների համար գեղարվեստական և իդեոլոգիապես կայուն ներկայացումներ և պիեսներ ստեղծելու, մանավանդ տեղական ազգային լեզուներով, ակումբային գեղարվեստական խմբակների ղեկավարների պատրաստումն ու վերապատրաստումն ընդլայնելու վրա՝ այդ գործին մասնակից դարձնելով Հանրապետական Լուսժողկոմատների ուժերն ու միջոցները:

Ակումբներում յերիտասարդության մեջ տարվող աշխատանքը և յերիտասարդության պահանջների սպասարկությունը պետք է կատարվի յերիտասարդական սեկցիաների միջոցով: Անհրաժեշտ է հետամուտ լինել, վոր ակումբների վարչությունները պլանային ղեկավարություն ցույց տան յերիտսեկցիաների աշխատանքին և սեկցիաներին ակումբի ներսում պետք է նորմալ պայմաններ ընձեռնել բանվոր յերիտասարդությանը սպասարկելու համար և սերտ կապ ու համաձայնվածություն ստեղծել յերիտսեկցիաների և ընդհանուր ակումբային աշխատանքների միջև:

Համագումարը բոլոր պրոֆկազմակերպությունների ուշադրությունն է դարձնում կոմունալ տնտեսություններից մաքսիմալ արտոնություններ ստանալու անհրաժեշտության վրա, թե՛ արհմիութենական կուլտ-հիմնարկների գրաված շենքերի վարձը վորոշելիս և թե՛ ընձեռնված կոմունալ ծառայությունների (ջուր, լույս և այլն) համար:

23. Արձանագրելով ԱԽՖՍՀ պրոֆկազմակերպությունների նշանակալից նվաճումները արհմիությունների անդամների առանձին ազգային խմբերի կուլտուրական-կենցաղային պահանջներին սպասարկելու և նրանց ակտիվ պրոֆաշխատանքի մեջ քաշելու ասպարեզում, Համագումարը պրոֆկազմակերպությունների հետագա աշխատանքների ընթացքում առաջարկում է աննկուն շարունակել աշխատանքը հետևյալ ասպարեզներում՝



ա) առանձին ազգային խմբակների և մանավանդ ազգային փոքրամասնությունների կուլտակտիվի հայտնաբերման և նրա հետ սիստեմատիկ աշխատանք տանելու.

բ) ազգային փոքրամասնություններից՝ կուլտհանձնաժողովների, ակումբների վարչությունների, կուրսեր ուղարկելու համար և այլն աշխատողներ առաջ քաշելու.

գ) արհմիութենական գրադարանների հետագա լրացումը տեղական ազգային լեզուներով գրված գրականությամբ և հրատարակություններով:

24. Նշելով ԱԽՖՍՀ պրոֆկազմակերպությունների լույս ընծայած պարբերական հրատարակությունների (լրագրների և ժուրնալների) վորակի լավացումը, ավելի կանոնավոր լույս ընծայելը, ինչպես և ընթերցող մասսային ավելի մոտեցնելը, Համագումարն անհրաժեշտ է համարում, վոր հանրապետական արհմխորհուրդների հրատարակած պրոֆ. ժուրնալները վերածվեն օրգանների, վորոնք հարմարված են լայն ստորակա պրոֆակտիվին:

Նկատի առնելով մի քանի լեզուներով գրականություն հրատարակելու անհրաժեշտությունը և այդ նպատակի համար հատկացված բավարար միջոցների բացակայությունը, Համագումարն անհրաժեշտ է համարում, հետամուտ լինել՝ հանրապետական Պետհրատների պլանների մեջ մտցնելու ազգային լեզուներով գրված արհմիութենական և արտադրական գրականություն: Միաժամանակ հանրապետական արհմխորհուրդները պետք է համաձայնության գան ՀԱՄԿԽ-ի խմբագրական հրատարակչական բաժնի հետ միասին ազգային լեզվով գրականություն լույս ընծայելու, ինչպես և առանձին արհմիությունների կենտկոմները կանոնավոր նյութական օգնություն պետք է ցույց տան ազգային պրոֆ. հրատարակչություններին:

25. Համագումարն արձանագրում է, վոր կուլտ-լուսավորչական աշխատանքը արհմիությունների գործազուրկ անդամների մեջ բավարար չափով չի տարվում և բոլոր պրոֆկազմակերպություններին առաջարկում է գործազուրկներին մաքսիմալ չափով ընդգրկել միութենական ակումբների, գրադարանների, ընթերցարանների մեջ, ինչպես և կազմակերպել աշխատանքի բորսաներին կից կարմիր անկյուններ, ընթերցարաններ, հանգստի սենյակներ և այլն:

Գործազուրկների մեջ տարվող կուլտաշխատանքի մեջ հատուկ ուշադրություն պետք է դարձնել գործազուրկ փոքրահա-

տակների կուլտսպասարկության վրա, նրանց ամեն կերպ ներգրավելով ակումբները, նրանց համար ակումբներում ցերեկորյա պարապմունքներ կազմակերպելով և այլն:

26. Խորհրդային հանրապետությունները կապիտալիստական յերկրների հնարավոր ինտերվենցիայից պաշտպանելու խնդիրը արհմիություններից համառ կերպով պահանջում է ակումբներում և կարմիր անկյուններում ավելի յեռանդուն աշխատանք ծավալել ռազմական պրոպագանդայի մասսայական ձևերի շուրջը, այդ աշխատանքին մասնակից դարձնելով պրոֆմիության անդամների վորքան կարելի յե լայն մասսաներին և կազմակերպելով հրաձգային խմբակներ, պատերազմի առաջին ոգնության խմբակներ, դասախոսություններ ռազմաքաղաքական թեմաների շուրջը, ռազմական հրաձգարաններ կառուցելով և մաքսիմալ չափով ակումբային ռազմական անկյունների և ռազմական գիտելիքների խմբակների աշխատանքն աշխուժացնելով:

Արհմիության անդամների մեջ տարվող ամբողջ ռազմական պրոպագանդան և նրանց ռազմական պատրաստությունը պետք է ակումբային աշխատանքի սիստեմի մեջ մտնեն, դառնան ակումբների և կուլտհանձնաժողովների աշխատանքի պլանների որգանական մասը:

27. Նշելով, վոր մասսայական բանվորական եքսկուրսիաները բավականաչափ նախապատրաստված լինելու դեպքում դրական արդյունքներ են տալիս, բայց միևնույն ժամանակ կուլտաշխատանքի այդ տեսակը դեռ բավականաչափ զարգացած չէ, համագումարը անհրաժեշտ է համարում լայն կերպով ժողովրդականացնել եքսկուրսիաների բոլոր տեսակները, մանավանդ այն եքսկուրսիաները, վորոնք ծանոթացնում են բանվորներին հարևան հանրապետությունների շինարարությանը, ինչպես և եքսկուրսիա-պատգամավորությունները:

Անհրաժեշտ համարել անցկացվող հեռավոր եքսկուրսիաները համապատասխան բարեկարգ. բազաներով ապահովելը:

28. Ընդունելով կինոյի հսկայական դաստիարակչական նշանակությունը համամիութենական կուլտաշխատանքի մեջ, անհրաժեշտ է ձգտել կինո-կայաններ կազմակերպել բոլոր գոյություն ունեցող արհմիութենական ակումբներում և ավելացնել միութենական շարժական կինոների ցանցը գյուղում:

Միաժամանակ համագումարն արտահայտվում է ակումբների և միությունների անդամների համար ամենամինիմալ վճար սահմանելու ոգտին, կինո-սեանսների ժամանակ, հրաժարվելով



առևտրական թեքումից կինոյի աշխատանքում և հարկավոր ուշադրությունը դարձնելով իդեոլոգիապես—ընդունելի կինո—ֆիլմերի ընտրության և ստեղծման, մասնավորապես յերեխաների համար, այդպիսիները բանվորական կինո-եկրանների վրա ցուցադրելու աշխատանքի վրա:

29. Մեծ նշանակություն տալով ֆիզկուլտուրային, իբրև արհմիությունների մասսայական աշխատանքի մի տեսակի, իբրև աշխատավորների առողջությանը նպաստող և Կարմիր բանակի համար մարտիկներ պատրաստող մի միջոցի, համագումարը նորից արձանագրում է, վոր ֆիզկուլտաշխատանքի մեջ բավարար չափով չեն ընդգրկված լայն բանվորական մասսաները, կանայք, ինչպես և արհմիության անդամների առանձին ազգային խմբերը և առաջարկում է հետագայում ել ավելի ուժեղացնել այդ աշխատանքը: Արձանագրելով, վոր ֆիզկուլտաշխատանքի մեջ գոյություն ունեն մեծ քանակությամբ թեքումներ, ինչպես օրինակ՝ չեմպիոնասիրություն, ժետոնասիրություն, խմբակից խմբակ փախչել և ուրիշներին հրապուրել, համագումարը բոլոր պրոֆկազմակերպությունների ուշադրությունն է դարձնում ֆիզկուլտաշխատանքի մեջ նման յերևույթների դեմ վճռականապես պայքարելու անհրաժեշտության վրա:

Անհրաժեշտ է ճշտել արհմիությունների և ֆիզկուլտ խորհուրդների փոխհարաբերությունները, այն իմաստով, վոր պրոֆկազմակերպությունների մասնակցությունը ֆիզկուլտ խորհուրդների աշխատանքին, իբրև ղեկավար միջմիութենական մարմինների, ուժեղացվի: Միաժամանակ համագումարը նշում է, վոր ֆիզկուլտ խորհուրդների ղեկավարությունը արհմիութենական ֆիզկուլտաշխատանքի նկատմամբ պետք է ընդգրկի միայն ֆիզկուլտ աշխատանքի մեթոդոլոգիայի հարցերը և ընդ սմին այդ ղեկավարությունը պետք է իրականացվի արհմիությունների համապատասխան խորհուրդների միջոցով:

30. ԱԽՖՍՀ պրոֆկազմակերպությունների աշխատանքը պրոֆլուսավորության և պրոֆաշխատողներ պատրաստելու ասպարեզում, պահանջում է այդ աշխատանքի հետագա ուժեղացումը: Դրա համար անհրաժեշտ է՝ շարունակել պրոֆդպրոցների ցանցի ընդլայնումը, կազմակերպել կարճատև առարկայական պրոֆ-դասընթացքներ, համապատասխան մարմիններում հետամուտ լինել հանրակրթական դպրոցների, յերեկոյան դասընթացքների և այլն ընդլայնման, ուշադրություն դարձնել ինքնազարգացման ա-

ջակցելու և խրախուսելու վրա, հետամուտ լինել, վոր ԱԽՖՍՀ-ին ավելի շատ տեղ հատկացվի Մոսկվայի պրոֆշարժման բարձրագույն դպրոցում. անհրաժեշտ միջոցներ ձեռք առնել պրոֆդպրոցների և դասընթացքների աշխատանքը ազգային լեզուներով ուժեղացնելու համար, ընդլայնել և խորացնել մասսայական պրոֆլուսավորության աշխատանքը, կազմակերպելով ակումբներում, կարմիր անկյուններում, ձեռնարկներում դասախոսություններ, զրույցներ, ինչպես և ուժեղացնել ինֆորմացիոն-բացատրական աշխատանքը արհմիութենական աշխատանքի խնդիրների վերաբերյալ, այդ նպատակով օգտագործելով պատի թերթերը, ռադիոն, ինչպես և կենդանի շփումը բանվորների հետ. բանվորների ամենահետամնաց խավերից, ինչպես և բատրակներից պրոֆակտիվ պատրաստել. ժամանակին ապահովել պրոֆդպրոցներն ու պրոֆխմբակները պարապմունքների համար անհրաժեշտ դասագրքերով և գրականությամբ:

31. Գտնելով, վոր ԱԽՖՍՀ պրոֆկազմակերպությունների աշխատանքը արտադրական լուսավորության ասպարեզում մինչև այժմ թույլ է տարվում և միաժամանակ հաշվի առնելով աշխատանքի այդ տեսակի առանձնապես կարևոր նշանակությունը, վորը կապված է կատարվող ինդուստրացման և արտադրության վերակառուցման հետ, համագումարն անհրաժեշտ է համարում այդ աշխատանքի ուժեղացումը:

32. Համարելով Ֆաբգործուսի դպրոցները փոքրահասակներից վորակյալ բանվորական ուժ պատրաստելու հիմնական ձև, համագումարն անհրաժեշտ է համարում, վոր գոյություն ունեցող Ֆաբգործուսի դպրոցները մաքսիմալ չափով հարմարեցվեն արտադրության կարիքներին, ավելի լրիվ ապահովված լինեն կահավորմամբ, ձեռնարկներով և ղեկավարների վորակյալ կազմով:

Ֆաբգործուսի դպրոցներում ուսումն ավելի ռացիոնալ կերպով դնելու համար անհրաժեշտ է գործադրել Աշխատանքի Կենտրոնական Ինստիտուտի մեթոդները:

Պրոֆկազմակերպությունները պետք է պատշաճ ուշադրություն դարձնեն բրիգադային և անհատական աշակերտության գործը դնելու և զարգացնելու վրա:

33. Ռադիո—աշխատանքը ԱԽՖՍՀ-ի պրոֆկազմակերպությունների մեջ հարկ յեղած զարգացումն ու տարածումը չի ստացել: Ուստի համագումարն անհրաժեշտ է համարում ընդարձակել հետագայում բարձրախոս ռադիո-ընդունիչ կայանների ցանցը,



առաջին հերթին այն ռայոններում, վորոնք հեռու յեն գտնվում կուլտուրական կենտրոններից, և աշխատանք տանել ռադիո-հաղորդման վորակը լավացնելու շուրջը, հմտորեն զուգորդելով գեղարվեստական նյութը ագիտացիոն-պրոպագանդիստականի հետ:

Ամրացնել ռադիո-խմբակների աշխատանքը, դնելով՝ նրանց առաջ միութենական ռադիո-կայանների սպասարկման, անհատական ռադիո-շինարարության մասսայական զարգացման և ռադիո հաղորդման ու ռադիո-ընդունման ասպարեզում յեղած թերությունների հայտաբերման խնդիրը:

Ռադիո-սիրողների ռազմականացման նպատակով, բոլոր ակումբային ռադիո-խմբակների ծրագրի մեջ մտցնել պարապմունքներ ռազմական ռադիո-ապարատուրայի հետ ծանոթացնելու և ռազմական ռադիո-կապ հաստատելու համար:

Անհրաժեշտ է հետամուտ լինել համապատասխան կազմակերպություններից լայն վարկ ստանալու՝ արհմիության անդամների համար ռադիո-ապարատուրա ձեռք բերելու նպատակով:

Անդրարհմխորհը և հանրապետական արհմխորհները պետք է կազմակերպեն ԱԽՖՍՀ և առանձին հանրապետությունների մասշտաբով կանոնավոր ռադիո-հաղորդում:

34. ԱԽՖՍՀ պայմաններում (ուր դեռ կա անգրագետների նշանակալից տոկոս) արհմիության անդամների անգրագիտությունը վերացնելու աշխատանքն առանձնապես կարևոր նշանակություն ունի: Ուստի համագումարը գտնում է, վոր պրոֆկազմակերպությունները աշխատանքի այս տեսակին հետագայում համապատասխան ուշադրություն պիտի նվիրեն:

Համագումարը նորից հաստատում է արհմիությունների III Անդրկովկասյան համագումարի ցուցմունքն անգրագիտության վերացման բոլոր ծախքերը Լուսժողկոմատի որգանների և գործկոմների հաշվին փոխադրելը, պրոֆկազմակերպություններին թողնելով լիկկայաններ կազմակերպելու և նրանց մեջ անգրագետներ ներգրավելու աշխատանքին աջակցելու գործը:

35. Կուլտաշխատանքն անմիջապես ձեռնարկներում կամ բանվորական կոմպակտ մասսաների բնակչության վայրերում (կազարմաներ և հանրակացարաններ) ծավալելը հսկայական նշանակություն է ստանում:

Ուստի համագումարն այդ աշխատանքը հետագայում ծավալելու նպատակով անհրաժեշտ է համարում այն ձեռնարկությունների կարմիր անկյուններում, վորոնք աշխատում են մի քանի



16020 — 57

հերթափոխով, կազմակերպել աշխատանք ամբողջ օրվա ընթացքում. Ձեռնարկությունների կուլտհանձնաժողովները պետք է ձըգտեն իրենց կողմից սպասարկվող արհմիության անդամներին որքան կարելի է շատ ընդգրկել և նրանց ակտիվ կուլտաշխատանքի մասնակից դարձնել, կարմիր անկյունների կուլտաշխատանքը չսահմանափակել որևէ որոշ ձևերով և տեսակներով, նրանց ավելի մեծ հնարավորություն ընձեռնելով ստեղծագործ ինքնագործունեության և ձեռներեցության համար:

Բանվորների հանրակացարաններում և կացարաններում հանգստի ժամերին անհրաժեշտ է կիրառել գլխավորապես մասսայական կուլտաշխատանքի հանրամատչելի ձևեր, ինչպես օրինակ՝ լրագրերի և ժուռնալների բարձր ընթերցանություն, խաղեր, շարժական գրադարանների աշխատանք և այլն:

## Գ. ՏԱՐԻՖ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՌԹԻՎ

36. Ժողովրդական տնտեսության աճմանն ու ամրացմանը, որը հիմնվում է սոցիալիստական արդյունաբերության, հիմնական շինարարության և արտադրության ռացիոնալացման հետագա զարգացման վրա, ընկերակցվում է բանվոր դասակարգի նյութական դրության և նրա կյանքի կենցաղային պայմանների հետագա լավացումը և նրա աշխատավարձի աճումը:

Իրենց տարիֆային և տնտեսական աշխատանքների մեջ միությունները պետք է է՛լ ավելի մեծ չափով ուշադրություն նվիրեն սոցիալիստական տնտեսությունն ամեն կերպ ամրացնելուն և արտադրության ռացիոնալացման, ծախսերի կրճատման, ինքնարժեքի մաքսիմալ էժանացման և գների իջեցման խնդիրներն իրագործելուն: Այդ աշխատանքը կը հանդիսանա ո՛չ միայն սոցիալիստական կառուցման և քաղաքի ու գյուղի ապրանքաշրջանառության առողջացման աղբյուր, այլ և աշխատավարձի ռեալ նշանակության հետագա աճման ամենագլխավոր լծակը:

Արհմիությունների հիմնական քաղաքականությունը աշխատավարձի ասպարեզում հետագայում, ինչպես և մինչև այժմ, պետք է հանգի բանվոր դասակարգի կենսական մակարդակի բարձրացմանը այն չափով, ինչ չափով որ հետագայում կամրանա խորհրդային տնտեսությունը և կաճի աշխատանքի արտադրողականությունը: Ընդ որին աշխատանքի արտադրողականության և աշխատավարձի միջև յեղած փոխհարաբերությունը պետք է ապահովի սոցիալիստական կուտակման հետագա աճումը: Անհրաժեշտ է նաև, որ ուժեղանա և լավանա աշխատավարձի կանոնավորման պլանային աշխատանքը:



37. Արհմիությունների տարիֆային աշխատանքի հիմնական մոմենտ հանդիսանում է հավաքական պայմանագրերի կնքումը: Համագումարն անհրաժեշտ է համարում այդ աշխատանքի հետագա խորացումը, այն իմաստով, որ արհմիությունները, որքան կարելի է լավ նախապատրաստված և լավատեղյակ լինեն հավաքական պայմանագրի շոշափած բոլոր խնդիրներին. ճիշտ կերպով հաշվի առնեն աշխատավարձի, աշխատանքի վարձատրության սիստեմների, աշխատավորների առանձին խմբակների, կատեգորիաների և կվալիֆիկացիաների դրությունը, հայտնաբերեն գործարքային գնահատումների դրությունը, տվյալ տնտեսական մարմնի ընդհանուր դրությունը և հեռանկարները և այլն: Լայն բանվորական մասսաները ընդհանուր, պատգամավորական և ցեխային ժողովների միջոցով պետք է ակտիվ կերպով մասնակից դարձնել պայմանագրերի քննությանը՝ նրանց անցկացման բոլոր փուլերում:

Միութենական կազմակերպություններին հարկավոր է ապահովել բավականաչափ ժամկետ հավաքական պայմանագրերը նախապատրաստելու և կնքելու համար:

Միությունները լուրջ ուշադրություն պիտի դարձնեն կնքած պայմանագրերը կատարելու վրա, ժամանակին ձեռք առնելով նրանց կատարման համար անհրաժեշտ միջոցները և չկատարելու համար մեղավորներին պատասխանատվության կանչելով:

Համագումարը գտնում է, որ այսուհետև մշակվող մթերքների նորմաների վերանայումը չպետք է նշանակվի հավաքական պայմանագրերի վերանայման ժամանակ, այլ պետք է կատարվի ինքնուրույն կերպով և ոչ կամպանիայի կարգով:

38. Արձանագրելով, որ հավաքական պայմանագրեր կնքելու անցյալ կամպանիայի ժամանակ հաջողվեց իրագործել աշխատավարձի ռեֆորմի վերաբերյալ ձեռնարկումների միայն մի մասը, այն է՝ բավականաչափ լայն կերպով անց կացնել տարիֆային կոպարների ավելացումը ի հաշիվ գերարտադրանքի (приработка) և վարձատրության ուրիշ տեսակների, գործարքի գերարտադրության յերաշխավորյալ հաշվական կոէֆիցիենտները կրճատվել են, համարյա ամեն տեղ իրագործվել է անցումը բանվորների ամսական կոպարներից օրական կամ ժամային կոպարների և այլն, և նշելով, որ աշխատավարձի ռեֆորմի վերաբերյալ մի շարք մի-

ջոցների չկիրառելու պատճառը համապատասխան միությունների կենտկոմների կողմից տարիֆային ցանցերը և տեղեկատուները ժամանակին չուղարկելը կամ այդպիսիների կատարյալ բացակայությունն է, հենց ցանցերի և տեղեկատուների բավականաչափ մշակված չլինելը և անկատարությունն է, որ դժվարացնում կամ անհնարին է դարձնում նրանց կիրառումը, Համագումարը գտնում է, որ աշխատավարձի ռեֆորմի իրագործումը պետք է կատարվի հավաքական պայմանագրերի կնքման հետևյալ կամպանիայի ժամանակ:

Դրա համար անհրաժեշտ է՝

ա) Ուսումնասիրել տարիֆային ռեֆորմի անցկացման արդյունքները, այն իմաստով, որ հայտնաբերվեն վարձատրման մեծության և աշխատավորների առանձին կատեգորիաների աշխատավարձի փոխ-հարաբերության մեջ կատարված փոփոխությունները, աշխատանքի վարձատրության սիստեմների պարզեցման և առողջացման մեջ ստացված արդյունքների ազդեցությունը աշխատանքի արտադրողականության վրա և այլն:

բ) Առանձին և հատուկ ուշադրություն նվիրել աշխատանքի նորմավորման գործը հիմնարկներում ճիշտ կերպով դնելու վրա, մասնավորապես տարիֆ-նորմավորման բյուրոների աշխատանքին, այդ աշխատանքին տալով սահմանվող նորմաների խոր, լիակատար և սիստեմատիկ ուսումնասիրության բնույթ:

39. Ուղիղ համարելով թե՛ պետական բյուջեի և թե՛ տեղական բյուջեի հաշվին պահվող պետական հիմնարկների ծառայողներին աշխատավարձի պետական նորմավորման փոխադրելը, Համագումարն անհրաժեշտ է համարում այն հիմնարկներում, ուր պետական նորմավորումը չի անցկացվելու, պարտադիր կերպով և ամեն տեղ անցնել ըստ պաշտոնի սահմանվող կոպարների սիստեմին հավաքական պայմանագրեր կնքելու կարգով:

Պետական նորմավորումը անցկացնելու մեջ միությունները պետք է ամենաակտիվ մասնակցությունը ցույց տան և լիովին իրագործեն օրենքով վերապահված իրավունքները և հայտնաբերեն իրենց ամբողջ փորձը և հեղինակությունը աշխատավարձը ամենից ավելի ճիշտ կառուցելու և ծառայողների աշխատանքի պայմանների ու բանվորական ժամանակի նորմավորման ուղղությամբ:

40. Նշելով, որ I և II աստիճանի դպրոցների ուսուցիչների, պրոֆեսուրայի և գիտական աշխատողների աշխատավարձի բարձրացման և մյուսներին հասցնելու հետևանքով մանկավարժական պերսոնալի դրությունը որոշ չափով լավացել է, Համագումարն անհրաժեշտ է համարում հարց հարուցել համապատասխան օրգանների առաջ այդ խմբերի աշխատավարձի հետագա բարձրացման և ուրիշ կատեգորիաների համապատասխան կվալիֆիկացիա ունեցող աշխատողների և ԽՍՀՄ-ի ուրիշ ռայոնների վարձատրության չափին հասցնելու մասին: Արձանագրելով մյուս կողմից նրանց վարձատրման տեսակների բազմազանությունը, Համագումարը հանձնարարում է Անդրարհմխորհին՝ մասնակից դարձնելով հանրապետական արհմխորհներին և լուսաշխի կենտվարչություններին մանրամասնորեն մշակել այն բոլոր հարցերը, որոնք կապված են աշխատողների այդ խմբերի վարձատրությունը կանոնավորելու հետ:

Համագումարն անհրաժեշտ է համարում հարց հարուցել համապատասխան մարմինների առաջ՝ բժշկական պերսոնալի, միլիցիայի և անտառային պահակի հետ մնացած խմբերի աշխատավարձը բարձրացնելու և մյուսներին հասցնելու մասին:

41. Ձեռնարկների վերակառուցման և մեր յերկրի ինդուստրացման տեմպը նշանակալից չափով կախված է արդյունաբերության, աշխատանքի, առևտրական և կառավարչական ապարատի ռացիոնալացման անց կացումից և պրոֆկազմակերպությունների խնդիրն է հանդիսանում ուժեղացնել իրենց մասնակցությունը ռացիոնալացման աշխատանքին և լայն բանվորական մասսաները այդ աշխատանքի մեջ ընդգրկելը: Բանվորներին լայն կերպով ռացիոնալացման աշխատանքին մասնակից դարձնելը հնարավոր է, գլխավորապես, արտադրական խորհրդակցությունների միջոցով:

Նշելով, որ արտադրական խորհրդակցությունների աշխատանքը ուժեղացել է, Համագումարը գտնում է, որ այդ աշխատանքի հետագա խորացման և լայնացման համար անհրաժեշտ է՝ ավելի հաճախ հրավիրել այդ խորհրդակցությունները, ուժեղացնել պլանաչափությունը, լայնացնել ցեխային խորհրդակցությունների պրակտիկան և բանվորների ու ճարտարապետական-տեխնիկական ուժերի ավելի լայն շրջան մասնակից դարձնել արտադրական խորհրդակցություններին, ուժեղացնել արտադրական հանձնաժողովների մշտական կապը բանդյուղտեսչության հետ. վերջնականապես պետք է կանոնավորեն՝ ինչպես միությունները՝ արտադրական խորհրդակցությունների և հանձնաժողովների աշխատանքի հաշվառումը Համարհմխորհի միասնական ձևերով, նույն-

պես և տնտեսական մարմինները խնայողության հաշվառումը՝ ըստ արտադրական խորհրդակցությունների և հանձնաժողովների առաջարկությունների, անհրաժեշտ է լայնացնել վերահսկիչ հանձնաժողովների ցանցը և խորացնել նրանց աշխատանքը:

42. Նշելով պրոֆկազմակերպությունների տնտեսական աշխատանքի պլանաչափության անբավարարությունը և նրա պատահական բնույթը, համագումարը արհմխորհուրդներին և միություններին պարտավորեցնում է՝

ա) ակտիվ մասնակցություն ցույց տալ թե գոյություն ունեցող և թե նոր կառուցվող ձեռնարկների մեջ կատարվող հիմնական ներդրումների պլանը կազմելուն, մշակելով և ուսումնասիրելով վերահսկիչ թվերն ու տարեկան և հնգամյա պլանները:

բ) ամենաակտիվ մասնակցությունը ցույց տալ պլանավորող և կանոնավորող մարմիններին թե՛ նոր արդյունաբերական շինարարության և թե՛ գործող ձեռնարկների վերակառուցման նախագծերի քննության և մշակման.

գ) մշակել այն խնդիրները, թե ռացիոնալիզացիան ինչպիսի ազդեցություն է ունենում աշխատանքի պայմանների վրա և դնել միութենական աշխատանքի հաշվառումը արտադրության ռացիոնալացման ասպարեզում:

43. Բանվորների գյուտարարության ընդունակությունների լայն օգտագործումը մեծ դեր է խաղում արտադրության և աշխատանքի ռացիոնալացման գործում, ուստի բանվորական գյուտարարությունը խրախուսելու և արտադրությանը խնայողություն տվող գյուտերն ու առաջարկությունները մրցանակի արժանացնելու խնդիրներն առանձին նշանակություն են ստանում:

Նշելով, որ Ժողտնտխորհի և ՀԱՄԿԽ-ի ցուցմունքները տվյալ հարցի մասին թույլ են կատարվել, համագումարն անհրաժեշտ է համարում՝

ա) հետամուտ լինել բանվորական գյուտարարության աջակցման ֆոնդեր ստեղծելուն բոլոր ձեռնարկներում, այդ թվում և Ժողտնտխորհին վոչ յենթակա ձեռնարկներում.

բ) մրցանակի արժանացնել վոչ միայն գյուտարարությունը, այլ և այն առաջարկությունները, վորոնք արտադրության համար խնայողություն են տալիս և աշխատանքի պայմաններն են լավացնում.

գ) աջակցության ֆոնդի մի մասը ծախսել բանվոր-գյուտարարների համար կատարվող գծանկարների վարձատրության, լա-



վագույն արտադրողի մրցության, բանվորական գյուտարարության շուրջը ցուցահանդեսներ սարքելու համար և այլն.

դ) հետամուտ լինել բոլոր խոշոր ձեռնարկներում տեխնիկական կոնսուլտացիա կազմակերպելուն բանվոր-գյուտարարներին տեխնիկական ամեն տեսակ օժանդակություն ցույց տալու համար:

44. Մեծ նշանակություն տալով ապրանքների և բանվորական սպառման առարկաների գների իջեցման, համագումարը բոլոր պրոֆկազմակերպություններին առաջարկում է ամեն կերպ ուժեղացնել իրենց մասնակցությունը գների իջեցման համար մղվող պայքարին: Գների իջեցման խնդիրները, վորոնք սերտ կերպով հյուսվում են արտադրության ռացիոնալացման և ղեկավարության, ապրանքների և մթերքների պատրաստման և բաշխման, տնտեսական ապարատի և ապրանք անցկացնող ցանցի ճիշտ կառուցվածքի, ապրանքների վորակի լավացման հետ և այլն, պետք է վերից ներքև միութենական բոլոր կազմակերպությունների ամբողջ աշխատանքի մեջ առաջնակարգ տեղերից մեկը գրավեն: Այդ աշխատանքի մեջ ավելի քան վորևէ ուրիշ ասպարեզում, պետք է արտահայտվի աշխատավոր ամենալայն մասսաների մասնակցությունը: Արհմիությունները և նրանց տեղական մարմինները պետք է հանձն առնեն այդ մասսայական աշխատանքի կազմակերպությունը:

45. Մոտակա ժամանակաշրջանում հերթական խնդիր դարձած և հսկայական կարևորություն ունեցող անցումը 7 ժամյա բանվորական օրվա իրագործվելու համար արհմիություններից պահանջում է ամենագործունյա մասնակցություն: Միությունների այդ մասնակցությունը պետք է արտահայտվի տնտեսական մարմիններին ցույց տալով ամեն տեսակ աջակցություն՝ կյանքի մեջ անց կացնելու արտադրության ռացիոնալացման ու մեքենայացման և աշխատանքի արտադրողականությունը բարձրացնելու բոլոր անհրաժեշտ միջոցները, վորոնք պայմանավորում են անցումը 7 ժամյա բանվորական օրվա, ինչպես և հայտնաբերելու այս կամ այն ձեռնարկության պատրաստության աստիճանը կրճատված բանվորական օրվա անցնելու համար:

46. Պրոֆկազմակերպությունները պետք է ուժեղացնեն իրենց անդամներին իրավաբանական օգնություն ցույց տալը: Դրա համար համագումարը անհրաժեշտ է համարում պրոֆկազմակերպություններին կից արդեն գոյություն ունեցող իրավաբանական կոնսուլտացիաների աշխատանքը վորակապես լավացնել և այդպիսիների ցանցն ընդլայնել:

## ԱԽՖՍՀ Ի ԱՇԽԺՈՂԿՈՄԱՏԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԱՌԹԻՎ

1. *Արդյունաբերության զարգացման և լայնացման, նրա վերակառուցման և ռացիոնալացման կապակցությամբ Աշխատանքի Ժողովրդական Կոմիսարիատի գործունեությունը կրկնակիորեն պատասխանատու նշանակություն է ստացել:*

*Աշխատանքային խնդիրների ճիշտ լուծումը, ընդհանուր ամուր վերահսկողությունը աշխատանքի օրենսդրությունը (աշխատանքի պաշտպանություն, աշխատանքի շուկայի կանոնավորում, սոցիալական ապահովագրություն) անց կացնելու վրա, ինչպես և արդյունաբերական ձեռնարկները հետզհետե 7 ժամյա բանվորական օրվա անց կացնելու իրագործումը պահանջում են, ավելի քան մինչև այժմ յեղել է, ԱԽՖՍՀ-ի Աշխատանքի Ժողովրդական Կոմիսարիատի և Հանրապետական աշխժողկոմների աշխատանքի ուժեղացումը և խորացումը:*

*Աշխատանքի բարեհաջող կանոնավորումը հարկ յեղածին պես կիրագործվի, յերբ անպայման սերտ գործնական փոխ-հարաբերություններ կստեղծվեն աշխատանքի օրգանների և արհմիութենական օրգանների միջև ամբողջ գծով:*

2. *Նկատի ունենալով, որ աշխատանքի շուրջը չափազանց շատ օրենսդրական կանոններ գոյություն ունեն, անհրաժեշտ է, որ Անդրաշխժողկոմատը միջոցներ ձեռք առնի աշխատանքի գործող օրենսդրությունը պարզեցնելու և կոդիֆիկացիայի յենթարկելու:*

3. *Ուշադրության առնելով Աշխժողկոմատի մարմինների ֆունկցիաների նշանակալից լայնացումը և նրանց հեղինակությունն ու դերը ուժեղացնելու անհրաժեշտությունը և արձանագրելով աշխատանքի ինսպեկցիայի բոլոր տեսակների հաստիքների (շտատների) անբավարարությունը, մանավանդ լեռնա-տեխնիկական և սանիտարական ինսպեկցիայինը, անհրաժեշտ համարել Աշխժողկոմատի և նրա տեղական մարմինների ամրացումը համապատասխան կվալիֆիկացիա ունեցող աշխատողների ընտրությամբ և Աշխժողկոմատի հաստիքների ընդլայնումը իր օպերատիվ մարմիններում (աշխատանքի ինսպեկցիայի բոլոր տեսակները և աշխատանքի բորսաները):*



## ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԹԻՎ

4. *Արձանագրելով, որ մտցված է պլանային սկզբունք աշխատանքի պայմանները ձեռնարկությունների մեջ առողջացնելու ասպարեզում և ներմուծված են խոշոր առողջացնող միջոցներ ձեռնարկների արտադրական-ֆինանսական պլանների և նախահաշիվների մեջ, աշխատանքի պաշտպանության մարմինները այդ աշխատանքը հաջող կերպով անց կացնելու համար պետք է՝*

*ա) ծանոթանան տրեստների և ձեռնարկների պլանային յենթադրությունների և արտադրական պայմանների հետ, համապատասխան պլանավորող օրգանների աշխատանքներին սիստեմատիկ կերպով մասնակցելով և օգտագործելով արտադրական խորհրդակցությունների ու վերահսկիչ հանձնաժողովների նյութերը:*

*բ) Ժամանակին նյութեր պատրաստեն արդյունաբերության հիմնական ներդրումների վերստուգիչ թվերի համար անվտանգության տեխնիկայի և արդյունաբերական սանիտարիայի համար ձեռք առնվող միջոցների շուրջը և ակտիվ մասնակցություն ցույց տան այդ պլանները պլանավորող մարմիններում քննելու ժամանակ, այդ աշխատանքը կապելով համապատասխան արհմիութենական կազմակերպությունների հետ.*

*գ) Հետևեն աշխատանքի պաշտպանության, արդյունաբերական սանիտարիայի և անվտանգության տեխնիկայի համար ձեռք առնվելիք միջոցներին տրամադրված վարկերը ժամանակին բաց թողնելուն, խիստ կերպով հսկեն այդ վարկերը լիովին ըստ պատկանելույն օգտագործելուն և տնտեսական մարմինների կողմից կնքված համաձայնությունները նշանակված ժամկետներին կատարելուն և համաձայնություն—պայմանագրերը բոլոր խախտողներին անշեղ կերպով դատական պատասխանատվության կանչեն:*

5. *Հետզհետե ավելի և ավելի ծավալվող նոր արդյունաբերական շինարարության և հին ձեռնարկների հիմնական վերակառուցման կապակցությամբ, աշխատանքի պաշտպանության մարմինները պետք է կենտրոնացնեն իրենց ուշադրությունը կանխողական վերահսկողության վրա:*

*Նկատի ունենալով կանխողական վերահսկողության մասին յեղած օրենսդրության խախտման դեպքերի առկայությունը, մանավորապես ձեռնարկների կառուցումը առանց նախագծի նախնական համաձայնեցման և ձեռնարկները գործի գցելն առանց նախնական զննության, անհրաժեշտ է վճռական միջոցներ ձեռք առնել այն տնտեսական մարմինների դեմ, որոնք խախտում են*

կանխողական վերահսկողության օրինաչափությունը, մինչև իսկ նրանց բոլոր նման դեպքերում պատասխանատվության կանչելով:

6. Ճիշտ համարելով լեռնարդյունաբերական ձեռնարկություններում անվտանգության տեխնիկայի վերահսկողությունը Աշխժողկոմատի մարմինների հայեցողությանը հանձնելը, Համագումարը ուշադրություն է հրավիրում լեռնա-տեխնիկական ինսպեկցիայի համապատասխան կազմակերպման անհրաժեշտության վրա՝ հանձնարարելով ընտրել բավականաչափ քանակությամբ միանգամայն վորակյալ աշխատողներ:

7. Դժբախտ դեպքերի աճող թիվը անհրաժեշտ է դարձնում արդյունաբերական տրավմատիզմին նպաստող պատճառների ավելի խորացրած և մանրամասն ուսումնասիրությունը, վորի համար անհրաժեշտ է ուշադրություն դարձնել հետազոտությունների վորակի վրա դժբախտ դեպքերի պատճառները վորոշելիս և ընդարձակել առանձին ձեռնարկներում պատահող տրավմատիզմի ուսումնասիրությունը: Այդ նույն նպատակով Աշխժողկոմատը պետք է ամեն կերպ օգտագործի վարչական ազդեցության կիրառումը վարձողների դեմ, յերբ այս վերջինները ժամանակին չեն հայտնում դժբախտ դեպքերի մասին:

8. Վնասակար արտադրությունների և պրոֆեսիաների աշխատանքի պայմաններն առողջացնելու նպատակով անհրաժեշտ է հետամուտ լինել պրոֆեսիոնալ թունավորումների և հիվանդությունների լրիվ հաշվառման և ցուցակագրության և ուժեղացնել այդ դեպքերի հետազոտումն ու կանխումը: Միաժամանակ, առողջացնող միջոցներ ձեռք առնելու հետ միասին, անհրաժեշտ է վերանայել կրճատ բանվորական օրվա, լրացուցիչ արձակուրդների և հատուկ սննդի գոյություն ունեցող նորմաները, այդպիսիներն աշխատանքի առանձնապես վնասակար պայմանների համեմատ ճշտելու համար:

9. Նկատի ունենալով արտահագուստի գոյություն ունեցող նորմաների անհամապատասխանությունը աշխատանքի և արտադրության պայմաններին, Անդրաշխժողկոմատը պետք է ԽՍՀՄ-ի Աշխժողկոմատի առաջ հարց հարուցի արտահագուստի և պահպանողական առարկաների նորմաների վերանայումն արագացնելու անհրաժեշտության մասին և այդպիսին հաստատելուց հետո մտցնել ԱՖԽՍՀ-ում տեղական պայմաններին համապատասխան ճշտումներով և լրացումներով:

10. Հաշվի առնելով գիտական հիմնավորման անհրաժեշտությունը աշխատանքի պաշտպանության բարդ հարցերը լուծելիս



և նշելով առաջին հաջող քայլերն այդ ասպարեզում, անհրաժեշտ է՝ պրոֆեսիոնալ առողջապահության, արդյունաբերական սանիտարիայի և անվտանգության տեխնիկայի վերաբերյալ գիտական-հետազոտական աշխատանքների զարգացումն ու ուժեղացումը. միջոցներ ձեռք առնել աշխատանքի առողջապահության և անվտանգության տեխնիկայի լաբորատորիաները համապատասխան հատուկ սարքավորմամբ և վորակյալ աշխատողներով ապահովելու համար. ԽՍՀՄ-ի աշխժողկոմատի առաջ հարց հարուցել Բաքվում շտապ կերպով նավթարդյունաբերության մեջ աշխատանքի պաշտպանության ինստիտուտ կազմակերպելու համար:

11. Խոշոր նշանակություն տալով աշխատանքի պաշտպանության, պրոֆեսիոնալ առողջապահության, արդյունաբերական սանիտարիային և անվտանգության տեխնիկային վերաբերող լուսավորչական աշխատանքին, անհրաժեշտ է աշխատանքի պաշտպանության և սոցիալական ապահովագրության թանգարանների հետագա զարգացումը, ձեռնարկություններում լեկցիոն աշխատանքի ուժեղացումը, պլակատների, թռուցիկների հրատարակությունը և այլն:

Միաժամանակ անհրաժեշտ է Բուհերում, Տուհերում և պրոֆ-դպրոցներում կազմակերպել անվտանգության տեխնիկայի, արդյունաբերական սանիտարիայի և պրոֆեսիոնալ առողջապահության դասավանդում:

12. Նկատի ունենալով թերությունների առկայությունը արդյունաբերական ձեռնարկների անվտանգության տեխնիկայի գործում, աշխատանքի մեջ անփորձ բանվորների նոր կադրեր ներգրավելու և բանվորական լայն մասսաների անվտանգության տեխնիկային վոչ բավականաչափ գիտակ լինելու մեջ, հատուկ ուշադրություն պիտի դարձնել բանվորներին հրահանգելու ու սովորեցնելու և աշխատանքի վտանգավոր մոմենտներին ծանոթացնելու վրա, ընդ սմին այդ աշխատանքը պետք է կատարեն տնտեսական մարմինները աշխատանքի ինսպեկցիայի և համապատասխան արհմիության հսկողության ներքո:

13. Անհրաժեշտ համարել՝ աշխատանքի տեսուչների ցանցի ընդլայնումը գյուղատնտեսական շրջաններում. այն շրջաններում, ուր միայն ընդհանուր իրավական ինսպեկցիաներ կան, ուժեղացնել նրանց գործունեությունը գյուղատնտեսության մեջ գործադրվող աշխատանքի պայմաններին հսկելու շուրջը. Գյուղատնտեսական ինսպեկցիայի ուշադրության կենտրոնը

փոխադրել դեպի գյուղացիական, մանավանդ արդյունաբերական տիպի տնտեսությունների մեջ գործադրվող վարձու աշխատանքի պայմանների վրա հսկելը, վոչ մի դեպքում թույլ չտալով վերջիններիս վրա տարածելու «Ժամանակավոր կանոնների» արտոնությունները:

Միաժամանակ անհրաժեշտ ե ուժեղացնել՝ ընդհանուր դատախազական իրավական և գյուղատնտեսական ինսպեկցիաների հսկողությունը բատրակային գործերը ժողդատարաններում արագ կերպով լուծելու վրա. աշխատանքի ինսպեկցիաների և գյուղբատրկոմների կապը. գավառ–թեմ–շրջգործկոմներին և գյուղխորհուրդներին կից հաշտարար հանձնաժողովների հրահանգումը և նրանց գործունեյության վերաբերյալ հսկողությունը, հետամուտ լինելով, վոր գյուղատնտեսության մեջ գործադրվող աշխատանքի առթիվ ծագած կոնֆլիկտները լուծվեն հաշտարար հանձնաժողովներում և նրանց աշխատանքը ուժեղացնել:

Գյուղատնտեսական բանվորների աշխատանքի պայմանները ռեալ կերպով լավացնելու նպատակով անհրաժեշտ ե՝ օրենսդրական կարգով սահմանել բատրակներին պարտադիր կարգով աշխատավարձի մի մասը դրամի ձևով տալը. հատուկ վորոշում հրատարակել հովիվների աշխատանքը մասնավոր տնտեսությունների մեջ կարգավորելու մասին և միջոցներ ձեռք առնել բոլոր տեղական լեզուներով շատ հրատարակելու և լայն կերպով ժողովրդականացնելու գյուղատնտեսական բանվորների աշխատանքի մասին յեղած ամբողջ օրենսդրությունը:

14. Անհրաժեշտ ե ուշադրություն դարձնել վարձու աշխատանքի սպասարկությունն ուժեղացնելու և աշխատանքի մասին յեղած օրենքները կյանքի մեջ ռեալ կերպով անց կացնելու վրա՝

ա) մանր և տնայնագործական արդյունաբերության մեջ, այդ աշխատանքին մասնակից դարձնելով ԼԿՅԵՄ և պրոֆկազմակերպությունների ներկայացուցիչներին և առանձին ուշադրություն դարձնելով փոքրահասակների աշխատանքին:

բ) տնային բանվորների և բանվորուհիների.

գ) գյուղում բժշկական և անասնաբուժական աշխատողների, գյուղատնտեսների, ուսուցիչների վերաբերմամբ և այլն:

15. Նկատի ունենալով կառուցողական (այդ թվում նաև ճանապարհային), փոխադրական և մելիորատիվ աշխատանքների առանձնահատուկ պայմանները (աշխատանքները մեծ մասամբ կատարվում են բնակավայրերից հեռու), ինսպեկցիայի հատուկ ուշադրությունը հրավիրել վերոհիշյալ աշխատանքների մեջ զբաղված բանվորների սպասարկությունն ուժեղացնելու վրա, մանավորապես նրանց վարձելու պայմանների ու կարգի վրա, անվտանգության տեխնիկայի, բնակարանային հարցի և բժշկական ոգնության դրության վրա:



16. Ուշադրություն դարձնել աշխատանքի տեսուչներին հաճախակի փոփոխելու անթույլատրելիության վրա, հնարավոր համարելով մինչև լիազորության ժամկետը լրանալը նրանց փոխարինելը միայն առանձնապես բացառիկ դեպքերում Հանրապետական Աշխժողկոմի և Արհմխորհի սանկցիայով: Աշխատանքի տեսուչների վորակը բարձրացնելու համար անհրաժեշտ ե կազմակերպել տարեկան կարճատև դասընթացքներ և կատարել սանիտարական և տեխնիկական աշխատուչների պարբերական գործուղումներ ԽՍՀՄ-ի արդյունաբերական կենտրոնները և նրանց համար գոյություն ունեցող հատուկ դասընթացքները:

17. Աշխժողկոմի մարմինները պետք ե արհմիութենական կազմակերպությունների և տնտեսական մարմինների հետ միասին ակտիվ կերպով նախապատրաստեն և մշակեն արդյունաբերական ձեռնարկները հաջող կերպով 7 ժամյա բանվորական օրվա փոխադրելու նյութերը, հատուկ ուշադրություն դարձնելով ձեռնարկները համապատասխան բանվորական ուժով, բնակարաններով, համապատասխան սանիտարական—տեխնիկական պայմաններով և այլն ապահովելու վրա:

18. Նկատի առնելով, վոր արտաժամյա աշխատանքի դեմ մղված պայքարը այն ինտենսիվ և համառ բնույթը չի կրում, վորպիսին պետք տեղի ունենար, աշխատանքի ինսպեկցիան պետք ե վճռական միջոցներ ձեռք առնի, արհմիութենական կազմակերպությունների հետ միասին, արտաժամյա աշխատանքները մաքսիմալ չափով կրճատելու և ամեն տեղ շաբաթական հանգստի որ տրամադրելու համար, լայն կերպով գործադրելով վարձողներին վարչական և դատական պատասխանատվության յենթարկելը չթույլատրված արտաժամյա աշխատանք թույլ տալու համար: Աշխժողկոմատի մարմինները պետք ե ուժեղացնեն վերահսկողությունը չնորմավորված բանվորական որ ունեցող պաշտոնների ցուցակը ճշտելու և մաքսիմալ չափով սահմանափակելու վրա, թույլ չտալով չնորմավորված բանվորական որ գործադրելու այն աշխատողների վերաբերմամբ, վորոնց վրա վերջինս չի տարածվում:

19. Նկատի ունենալով, վոր ձեռնարկները ժամանակավոր բանվորների աշխատանքը անհամապատասխան ձևով են գործադ-

րում, անհրաժեշտ է ուժեղացնել Աշխատողկոմատի մարմինների մասնակցությունը արտադրական ծրագրերի մշակմանը բանվորական ուժի քանակի վերաբերմամբ և խիստ հսկողություն ունենալ ժամանակավոր բանվորների աշխատանքը ճիշտ կերպով օգտագործելու վրա։

## ԱՇԽԱՏԱՆՔԻ ՇՈՒԿԱՆ ԿԱՆՈՆԱՎՈՐԵԼՈՒ ԱՌԹԻՎ

20. Արձանագրելով Աշխատողկոմատի միջնորդ մարմինների կողմից բանվորական ուժի ընդգրկման ընդարձակումը, գործազուրկներին աշխատանքային օգնություն ցույց տվող միջոցների ընդլայնումը և այդ միջոցների ֆինանսավորման ուժեղացումը, ինչպես և սոցիալական ապահովագրության մարմինների կողմից գործազուրկներին տրվող նպաստների ընդարձակումը,—անհրաժեշտ գտնել, որ Աշխատողկոմատի մարմինները միջոցներ ձեռք առնեն հետագայում է՛լ ավելի խորացնելու և լավացնելու միջնորդ մարմինների աշխատանքը։

21. Հետագայում անհրաժեշտ է՝ ամրացնել և ընդլայնել աշխատողկոմատի միջնորդ մարմինների կողմից տնտեսական մարմինների հետ վերջիններիս անհրաժեշտ բանվորական ուժ մատակարարելու մասին պայմանագրեր կնքելու պրակտիկան և կանոնավոր ու ժամանակին կատարել միջնորդ մարմինների կողմից աշխատանքային միջնորդության ասպարեզում հանձն առած բոլոր պարտավորությունները. ինչպես հարկն է դնել բանվորական ուժի ավելցուկը այդ ուժի կարիքը զգացող արդյունաբերության ճյուղերի և ժողովրդական տնտեսության միջև վերաբաշխելու աշխատանքը. հարկ յեղած բարձրության վրա դնել միջնորդ մարմինների միջև պահանջի և առաջարկի ավելցուկների փոխանակությունը։ Ուժեղացնել աշխատողկոմատի մարմինների հսկողությունը դրսից դեպի ԱԽՖՍՀ ներմուծվող բանվորական ուժի վրա, այդ հարցը կապելով գործազուրկների առկա կադրերի հետ. կարգավորել գործազուրկների իսկական կվալիֆիկացիայի հայտնաբերումը (եքսպերտիզա)։

22. Անհրաժեշտ համարել Աշխատողկոմատի մարմինների հսկողությունն ուժեղացնել ձեռնարկների և հիմնարկների կողմից աշխատանքի չուկան կարգավորող օրենքների, բանվորական ուժի վարձման պայմանագրերի և բանվորական ուժ վարձելու կարգի մասին յեղած հավաքական պայմանագրերի կետերի կատարման վրա, վճռական պայքար մղելով պրոտեկցիոնիզմի (հովանավորման սիստեմի) և բանվորական ուժ վարձելու կարգը խանգարելու դեմ, հանցավորներին ավելի լայն կերպով դատական պատասխանատվության կանչելով։ Այդ աշխատանքում պրոֆկազմակերպությունները պետք է աշխատողկոմատի մարմիններին ակտիվ աջակցություն ցույց տան։

23. Աշխատողկոմատի մարմինների աշխատանքը գործազուրկներին ժողովրդական տնտեսության կարիքներին հարմարեցնելու համար կատարվող ուսուցումը, վերապատրաստումը և պատրաստության թերին լրացնելը պետք է ուժեղացնել, որի համար անհրաժեշտ է տնտեսական մարմինների հետ պայմանավորվելու կարգով կազմակերպել համապատասխան դասընթացքներ վերավորակավորման համար և այդպիսիների մեջ ներգրավել ամենից ավելի կայունացած գործազրկության խմբակներին պատկանող գործազուրկներ (մտավոր աշխատանքով զբաղվող անձինք և բանվորներ)։ Հաշվի առնելով ԱԽՖՍՀ-ում տեքստիլ արդյունաբերության աճման և շինարարության հեռանկարների առկայությունը, անհրաժեշտ է լուրջ ուշադրություն դարձնել հիշյալ ճյուղերի համար բանվորական ուժ պատրաստելու գործին։

24. Աշխատողկոմատի մարմինները պետք է բոլոր միջոցները ձեռք առնեն կառուցող բանվորների աշխատանքի չուկայի կարգավորման գործում այն նպատակով, որպեսզի տնտեսական մարմինները ժամանակին ծավալեն շինարարական աշխատանքները և որքան հնարավոր է լավ կերպով օգտագործեն ամբողջ շինարարական սեզոնը։

25. Նկատի առնելով յերիտասարդության և կանանց մեջ նկատվող գործազրկության աճումը, Աշխատողկոմատի մարմինները պետք է ուշադրություն դարձնեն նրանց աշխատանքային օգնություն ցույց տալու վրա՝ համաձայն նրանց ունեցած տեսակարար կշռին ընդհանուր գործազրկության մեջ, գործազուրկ փոքրահասակներից և կանանցից հատուկ կոլեկտիվներ կազմակերպելու վրա, փոքրահասակներին ի հաշիվ գերբրոնյայի ձեռնարկներն ուղարկելու ուժեղացման և Փարգործումների համալրման ժամանակ փոքրահասակների պրոֆընտրությունը կազմակերպելու վրա։

26. Անդրաշխատողկոմատը պետք է լուրջ ուշադրություն դարձնի Աշխատողկոմատի մարմինների կողմից գործազրկության դեմ մղվող պայքարի գործը պլանավորելու և ուղղություն տալու վրա, մասնավորապես Աշխատողկոմատը պետք է կանոնավոր վերահսկողություն սահմանի գործազրկության դեմ պայքարելու ֆոնդի միջոցները ճիշտ ծախսելու վրա։ Համագումարը անհրաժեշտ է

համարում շատ աշխատանք կլանող կոլեկտիվների ցանցի հետագա ընդլայնումը և գործազրկության դեմ պայքարելու միջոցների ֆինանսավորման ուժեղացումը թե՛ պետական և թե՛ տեղական բյուջեով:

## ՏԱՐԻՖ-ԿՈՆՖԼԻԿՏԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՌԹԻՎ

27. Աշխատավարձի կանոնավորման ասպարեզում Աշխժողկոմատը պետք է ձեռք առնի բոլոր միջոցները աշխատավարձի պետական նորմավորումն անց կացնելու պետական և տեղական բյուջեով պահվող բոլոր հիմնարկներում, արհմիությունների հետ սերտ աշխատակցելով աշխատավարձի ֆոնդերն ըստ բյուջեի սահմանելու մեջ իր իսկական մասնակցությունն իրականացնելու և ճիշտ համաձայն պետնորմավորման կարգով սահմանված աշխատավարձ վճարելու վրա խիստ հսկողությունն իրականացնելու համար:

28. Արձանագրելով, վոր պետնորմավորումը պետական բյուջեով պահվող հիմնարկներում ընթացիկ տարում անցկացնելու միայն փոքր հետևանքներ են ստացվել կոպարների քանակը քչացնելու և առանձին հետ մնացած կոպարները բարձրացնելու և մյուսներին հասցնելու իմաստով, համագումարն ուշադրություն է հրավիրում յեկող տարվա բյուջեն կազմելիս հաշվի առնել կոպարների քանակի հետագա քչացման և հետ մնացած պրոֆեսիաների խմբերի վարձատրությունը բարձրացնելու և մյուսներին հասցնելու համար պահանջվող միջոցների և ըստ հնարավորության տարբեր հիմնարկների միատեսակ պաշտոնների վարձատրության մեջ միատեսակություն մտցնելու վրա:

29. Արձանագրելով, վոր Աշխժողկոմատի մարմիններում տեղի ունեն կոնֆլիկտային գործերի քննության ձգձգումներ, անհրաժեշտ համարել աշխատանքային կոնֆլիկտների անցման ինստանցիաների պարզեցումն ու կրճատումը, կոնֆլիկտների քննության ամուր ժամկետների սահմանումը, և ԳԿՀ մասին նոր կանոնադրության հրատարակումը: Նմանապես անհրաժեշտ համարել աշխատանքային կոնֆլիկտների քննության արագացումը աշխատանքային դատարաններում:

Նմանապես անհրաժեշտ է ռեալ կերպով ապահովել վարձողներին պատասխանատվության կանչելը աշխատանքային կոնֆլիկտները անբարեխիղճ կերպով ձգձգելու և կոնֆլիկտային մարմինների վորոշումները չկատարելու համար:



Անդրաշխժողկոմատը պետք է ԽՍՀՄ-ի Աշխժողկոմատի առջև հարց հարուցի աշխատանքային կոնֆլիկտները լուծելու և դրա վրա հսկելու կարգը ապակենտրոնացնելու մասին յերկաթուղային տրանսպորտում:

30. Յելնելով նրանից, վոր աշխատանքային որենսդրությունը նախատեսնում է մինիմալ նորմաներ, սխալ համարել հավաքական պայմանագրերը ցուցակագրելիս Աշխժողկոմատի մարմինների կողմից տեղի ունեցած այդ պայմանագրերի աշխատանքի պայմանները լավացնող առանձին կետերի վերացումը:

## ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԹԻՎ

31. Արձանագրելով, վոր ավելացված են բանվորական բնակարանային շինարարության համար բաց թողնվող գումարները, սահմանված են վարկավորման ամուր մշտական ֆոնդեր, իրենք աշխատավորները ներգրավված են բանբնակշինարարության մեջ, աճել են բնակշինկոոպերատիվ ընկերությունները և նրանց սեփական փայավճարների կուտակումը, ինչպես և այդ խնդրի ընդհանուր որենսդրական ձևակերպումը, անհրաժեշտ է Աշխժողկոմատի հետագա աշխատանքում ուժեղացնել ամեն տեսակի բանբնակշինարարության պլանային կարգավորումը:

32. Անհրաժեշտ համարել բանվորական բնակարանային շինարարության պլանները հաստատելիս և վարկերը վորոշելիս առանձին ուշադրություն դարձնել շինարարության թափն ուժեղացնելու վրա առաջին հերթին արդյունաբերական քաղաքներում և տնտեսական ուժեղ աճումն ունեցող շրջաններում, վորոնք ընդամենը սուր բնակարանային կրիզիս են ապրում:

33. Արդյունաբերության մեջ ներգրավվող բանվորական ուժի նոր կադրերի տեղավորման համար, անհրաժեշտ է միջոցներ ձեռք առնել, վորպեսզի բնակշինարարության պլանները սերտ կերպով կապվեն նոր արդյունաբերական կառուցվածքների պլանների հետ:

34. Անհրաժեշտ է ամեն կերպ աջակցել բանվորական բնակշինարարական կոոպերացիային և ավելացնել նրա վարկերը լրիվին՝ համաձայն իր սեփական փայավճարների կուտակման:

35. Նպատակահարմար համարել անհատական բնակարանային շինարարությունը բանվորների և ծառայողների կողմից, այն շրջաններում, ուր պետական և կոոպերատիվ բնակշինարարությունը բավականաչափ չի զարգացած և չի կարող բավարարել բանվորների բնակարանային կարիքները:

36. Անհրաժեշտ համարել միջոցներ ձեռք առնել բնակարանային շինարարությունն եժանացնելու և խոշորացնելու, կառուցվող տների որակը լավացնելու և այդ տները շրջանների կենցաղային պայմաններին համարեցնելու ուղղությամբ, լայն կերպով օգտագործելով շինարարության մեքենայացումը։

37. Գոյություն ունեցող բնակարանային ֆոնդը պահպանելու նպատակով անհրաժեշտ համարել բնակարանների վերանորոգման, ինչպես և առանձին ձեռնարկներին կից բանվորական բնակարանների սանիտարական պայմանների վրա հսկողությունը ուժեղացնելը։

---



## «ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԱԽՖՍՀ-ՈՒՄ» ԶԵԿՈՒՑՄԱՆ ԱՌԹԻՎ

1. Համագումարը նշում է զգալի նվաճումներ սոցիալական ապահովագրության ասպարեզում վերջին յերկու տարվա ընթացքում—սոցապահովագրության ընդհանուր բյուջեյի աճում, Սոցավի անցումն ամուր բյուջետային սկզբունքների, ընդհանուր ինվալիդության և հաշմանդամության կենսաթոշակային ապահովության նորմաների բարձրացում, գործազուրկների ապահովագրության շրջանակի ընդլայնում և ապահովագրման գումարի մեծացում և այլն, ինչպես և ապահովագրվածներին հանգստյան տներով և սանատորային-կուրորտային ոգնությամբ ապահովելու քանակային ավելացում և հանգստյան տների ու սանատորիաների շինարարության ասպարեզում ձեռք բերած նվաճումները։

2. Գտնելով, որ ապահովագրական գանձարկղները պետք է կազմակերպվեն միայն այն գավառներում, ուր վոչ պակաս քան 2 հազար ակտիվ ապահովագրված անդամներ կան, իսկ 500-ից մինչև 2000 ապահովագրվածներ ունեցող գավառներում պետք է կազմակերպվեն ապահովագրական կետեր գավառական գանձարկղների բոլոր իրավունքներով՝ անմիջապես նպաստ, կենսաթոշակ և այլն վճարելու տեսակետից, անհրաժեշտ գտնել այդ հիման վրա ԱԽՖՍՀ-ի ապահովագրական մարմինների ցանցը վերանայել և հետագայում այդ ցանցը փոփոխելիս յելնել ցույց տված նորմայից։

3. Ապահովագրական մարմինները պետք է պատշաճ ուշադրություն դարձնեն ապահովագրական պատգամավորների աշխատանքին՝ պետք է տեղյակ պահել նրանց ապահովագրական գանձարկղի աշխատանքին, պարբերաբար հրավիրել գանձարկղների կոմիտեների և ապպատգամավորների միատեղ խորհրդակցություններ, սահմանել ապպատգամավորների գանձարկղի հետ կապվելու կարգ՝ ապահովելու և ապպատգամավորների դիտողությունները՝ ապմարմիններում նկատվող ձգձգման դեպքերի վերաբերյալ՝ հաշվի առնելու խնդիրների առթիվ։ Այնտեղ ուր դեռ մինչև այժմ գոյություն չունի ապպատգամավորների ինս-

տիտուտ, անհրաժեշտ համարել այդպիսին անմիջապես կազմակերպելը:

4. Նկատի ունենալով գործող ապահովագրական օրենսդրության չափազանց բարդ կառուցվածքը և նրա մեջ կատարվող հաճախակի փոփոխությունները, համագումարն անհրաժեշտ է համարում, միջոցներ ձեռք առնել այդ օրենսդրությունը պարզեցնելու և նրա մեջ տեղի ունեցող հաճախակի փոփոխություններն ու լրացումները վերացնելու համար:

Գտնելով գործավարության և հաշվետվության սահմանված ձևերը ծանրաշարժ և բարդ, համագումարն անհրաժեշտ է համարում մի շարք միջոցներ ձեռք առնել այդպիսին պարզեցնելու և ապմարմինների կողմից ապահովագրվածներից պահանջվող փաստաթղթերի քանակը քչացնելու համար:

5. Անհրաժեշտ է արագացնել ապահովագրական ապարատի ռացիոնալացման աշխատանքը, վերանայել ապահովագրական մարմինների հաստիքը՝ հասցնելով այն մինչև 1 աշխատակցի՝ միջին հաշվով ամեն մի 500 ակտիվ և պասիվ ապահովագրվածին, կատարել աշխատակիցների խնամքով ընտրություն և նրանց առա մաքսիմում ծանրաբեռնվածություն:

Այս բոլորը հնարավորություն կը տա իսկապես վոր պարզեցնել և էժանացնել ապահովագրական ապարատը և կազմակերպչական ծախսերի կրճատումը հասցնել վոչ պակաս քան 20 տոկոսի:

6. Անհրաժեշտ է խորացնել պլանային հետազոտական աշխատանքը և ուժեղացնել բարձր ապահովագրական մարմինների կենդանի կապը ցածր ապմարմինների հետ, ուժեղացնել աշխատանքի առանձին ճյուղերի առթիվ պարբերական խորհրդակցությունների հրավիրումը և սահմանել Անդրկովկասյան ապահովագրական խորհրդակցությունների գումարումը վոչ պակաս քան տարին մեկ անգամ:

7. Հաշվետվության վոչ ճշտապահ և վոչ ժամանակին ներկայացնելը ղեկավար մարմիններին զրկում է ապահովագրական մարմինների աշխատանքը ճիշտ ուսումնասիրելու և նրան ուղղություն տալու հնարավորությունից: Անհրաժեշտ գտնել պատժական միջոցների կիրառումը ապահովագրական մարմինների այն ղեկավարների նկատմամբ, վորոնք հաշվետվությունը նշանակված ժամկետներին չեն ներկայացնում կամ ներկայացնում են չստուգված տվյալներ պարունակող հաշվետվություններ:



8. Հաշվի առնելով վերստուգիչ հանձնաժողովների աշխատանքի հատուկ կարևորությունը ապահովագրական գանձարկղների աշխատանքի բարդացման շնորհիվ, անհրաժեշտ գտնել՝ լրիվ ռևիզիա կատարելը տարեկան վոչ պակաս քան 2 անգամ Սոցապի հանրապետական կոմիտեներում և տարեկան վոչ պակաս քան 4 անգամ ապգանձարկղներում և ապահովագրական պունկտերում. ստուգել վերստուգիչ հանձնաժողովների, վերին ապահովագրական մարմնի և ԲԳՏ նախկին առաջարկությունների կատարումը. վերստուգիչ հանձնաժողովները մասնակից դարձնել գանձարկղների կոմիտեների նախագահության նիստերին:

9. Տրանսպորտում հատուկ ապահովագրական ապարատի գոյությունը ստեղծում է կտրվածություն տեղական տրանսպորտային և տերիտորիալ մարմինների միջև և առաջ է բերում ապահովագրվածների սպասարկության զանազանակերպություն, պարալելիզմ ապարատի, բժշկական վերահսկողության և այլնի վրա կատարվող ծախսերի:

Անհրաժեշտ է ղեկավարության միասնականություն սահմանել յենթարկելով տրանսպորտային գանձարկղները Գլխսոցապին: Միաժամանակ անհրաժեշտ է կյանքի մեջ անցկացնել տերիտորիալ և տրանսպորտային գանձարկղների ապարատի փոխադարձ ոգտագործումը և մշակել տրանսպորտային գանձարկղների ցանցի խնդիրը:

10. Գտնելով, վոր ապահովագրական պրոպագանդը ապմարմիններում նկատվող բյուրոկրատիզմի և քաշքշուկների դեմ պայքարելու մեթոդներից մեկն է, անհրաժեշտ համարել ապահովագրության բոլոր հիմնական հարցերի շուրջը թռուցիկներ հրատարակելը, պարբերական մամուլի մեջ օրենքների յուրաքանչյուր փոփոխության լուսաբանությունը, ապահովագրական թղթակիցների ինստիտուտ ստեղծելը տեղական լրագրերին կից և ազգային լեզուներով սոցապահովագրության շուրջը թարգմանական և ինքնուրույն հանրամատչելի գրականության հրատարակությունը:

11. Ապմարմինները պետք է ուժեղացնեն իրենց աշխատանքի կապակցումը արհմիությունների հետ, վերջիններիս հետ համաձայնեցնելով գործունեյության բոլոր ամենակարևոր մոմենտները: Խուսափելով մանր-մունր խնամակալությունից և ոպերատիվ աշխատանքին խառնվելուց, պրոֆմարմինները պետք է ուժեղացնեն աջակցությունը ապմարմիններին նրանց աշխատանքի ընթացքում:

12. Անհրաժեշտ է չտապեցնել բատրակությունը ապահովագրելու օրենքի անցկացումը, ստեղծելով հետևյալը այն պայմանով, վոր կազմակերպչական ծախս կատարվի մուծվող ապահովագրական միջոցների վոչ ավել քան 20 տոկոսի չափ՝

ա) ապահովագրական կետեր, վորոնք պետք է լինեն այն տեղերի լիազոր, ուր ամենից ավելի ապահովագրության յենթակա բատրակներ են կուտակված,

բ) գյուղական վայրերում և վոչ բավականաչափ, բայց ապահովագրության յենթակա կոմպակտ մասսա կազմող ռայոններում, լիազորներ, վորոնք ունեն հիմնական զուգընթաց աշխատանք և

գ) այն վայրերում, ուր ապահովագրության յենթակա աննշան թվով բատրակներ կան —տեղից-տեղ փոխադրվող լիազորներ:

Հողանտառմիությունը պետք է ամենաակտիվ մասնակցություն ցույց տա թե սոցապահովագրությունը գյուղում իրագործելու համար աշխատողներ առաջ քաշելու և թե՛ հենց բատրակության սոցիալական ապահովագրության օրենքը գործադրելու խնդրում:

13. Անհրաժեշտ է միջոցներ ձեռք առնել անմիջապես գյուղխորհուրդների, գայրա, թեմի և շրջգործկոմների աշխատողները ապահովագրման օրենքը կենսագործելու համար:

14. Նկատի ունենալով, վոր պարզված է, թե ժամանակավորապես աշխատունակությունից զրկվածներին և լրացուցիչ տեսակների ապահովագրման ասպարեզում աշխատանքի վոչ բավարար մոմենտներ են յեղել, անհրաժեշտ գտնել՝ վերանայել նպաստների հաշվման սահմանված կարգը, վորպեսզի նպաստը ապահովագրվածի միջին աշխատավարձից ցածր չլինի. հարկ յեղած ուշադրությունը նվիրել բժշկական վերահսկողության և բժշկական վերահսկող հանձնաժողովների աշխատանքին, թույլ չտալով վաղաժամ կերպով հաշմանդամության կարգը փոխադրել այն անձանց, վորոնք քիչ թե շատ յերկարատև ժամանակ հիվանդ են, յեթե նրանց աշխատունակությունը ըստ հիմնական պրոֆեսիայի կարող է վերականգնվել և մանավանդ «թեթև աշխատանքների փոխադրելը», վորը գործնականում ապահովագրվածին զրկում է ժամանակավորապես աշխատունակությունից զրկվածի նպաստից, աշխատավարձից և կենսաթոշակ չի տալիս. վերացնել այն անձանց շրջանի սահմանափակումը, վորոնց պետք է տրվի հենց ապահովագրվածի թաղման հատկացվող նպաստը:

15. Անհրաժեշտ համարել, հարց հարուցել այն մասին, վոր-



պեսզի՝ ա) գործազրկությունից ապահովագրվեն ընդհանուր կարգով մեռած ապահովագրվածների այն այրի կանայք, վորոնց կենսաթոշակ չի կարող նշանակվել, շնորհիվ նրանց աշխատունակության. բ) նպաստ տրվի հղիության 9-րդ ամսում նորածին յերեխային խնամելու համար. գ) նպաստ տրվի ժամանակավորապես աշխատունակությունից զրկված այն ապահովագրվածներին, վորոնք ազատված են աշխատանքից փոքրահասակ յերեխաներին խնամելու համար, այն դեպքերում, յերբ մայրերը հիվանդանոցներում բժշկվում են, սակայն վոչ ավել քան 1 ամսով. դ) պարզեցվի տնային աշխատավորուհիների սոցապահովագրման կարգը:

16. Անհրաժեշտ համարել (ըստ գավառական գանձարկղների) կենսաթոշակ տալու իրավունքի, կենսաթոշակային գործերը պահելը և ամբողջ կենսաթոշակային գործավարության ապակենտրոնացումը:

Միաժամանակ համագումարն անհրաժեշտ է համարում, վոր Սոցապի Կենտվարչությունը մշակի բժշկական եքսպերտիզայի բյուրոների համար ամբողջ ԽՍՀՄ-ի համար միասնական հիվանդությունների ցուցակ, հաշմանդամներին ըստ հաշմանդամության խմբերի բաշխելու կարգն ու նորմաները:

17. Սոցապահովագրության մարմինների ֆոնդերի ծախսերի անումը կատարվում է ավելի ինտենսիվ կերպով, քան մուծումները և ապահովագրական մարմինների շրջանառու միջոցները կրճատվում են: Ապահովագրական տարիֆի շարունակվող իջեցումը առանձնապես կրկնապատկվում է շինարարության 7 տոկոսային տարիֆի սահմանումով: Ապահովագրողների պարտքերը դեռևս խոշոր գումարներ են կազմում: Ընթացիկ մուծումների բռնագանձման տեմպը բավարար չէ: Միաժամանակ նկատվում է բյուջետային դիսցիպլինայի խախտում ապմարմինների կողմից: Այս բոլորը սպառնալիք է ստեղծում ԱԽՖՍՀ-ի ապմարմինների բյուջետային կայունության համար:

18. Անհրաժեշտ համարել արտոնյալ տարիֆի գործադրման գործող օրենքների վերանայումը այն նպատակով, վորպեսզի ֆինանսական տեսակետից ամենից ավելի ամրացած ձեռնարկները փոխադրվեն արտոնյալ տարիֆից նորմալ տարիֆի:

19. Անհրաժեշտ է ուժեղացնել ապահովագրական մուծումները գանձելու աշխատանքը և վճռական միջոցներ ձեռք առնել պարտքերը լիկվիդացիայի յենթարկելու համար, կենտրոնացած կարգով գանձելով տեղական-բյուջետային և պետբյուջետային

ապահովագրվողների պարտքերը և ապահովագրական մուծումները ձգձգելու մեջ հանցավորներին (մանավանդ մասնավոր անձանց) օրինական պատասխանատվության կանչելով:

20. Անհրաժեշտ է կարգավորել հասանելիք ապահովագրական մուծումները, որի համար՝ ամեն ամիս կազմել այն ապահովագրողների ցուցակները, վորոնք չեն ներկայացրել հաշվառման տեղեկագրեր, հանձնել այդ ցուցակները աշխատանքի տեսուչներին և հետևել, վոր այդպիսի ապահովագրողները տուգանվեն. մտցնել հաշվառման տեղեկագրերի պարբերական ստուգումն այդպիսիները բոլոր ապահովագրողների հաշվառման գրքերի հետ համեմատելով. վճարված աշխատավարձի գումարները թաքցնելու գործերը հանձնել ժողդատարաններին. այն ապգանձարկղների ներկայացուցիչներին, ուր ապահովագրական մուծումները լրիվ կերպով չեն հայտնաբերվում և ապահովագրական մուծումների պարտքերը մեծանում են, պատասխանատվության կանչել:

21. Անհրաժեշտ համարելով ծախսերին ըստ ամուր նախահաշիվների (հանգստյան տներ և սանատորիաներ նորոգելու և կառուցելու, սանատորային-կուրորտային կամպանիաների և ապահովագրվածներին հանգստյան տներում պահելու, կազմակերպչական ծախսերի համար և այլն) ժամանակին հաստատելը, պետք է դաժան միջոցներ ձեռք առնել, վորպեսզի պահպանվի բյուջետային դիսցիպլինան ըստ այդ բյուջեների, այդպիսին խախտելու մեջ հանցավորներին պատասխանատվության կանչելով:

22. Ապահովագրվածներին բժշկական օգնություն ցույց տվող բաժինների և յնիթարաժինների լուծարքի կապակցությամբ, պրոֆկազմակերպություններն ու ապմարմինները պետք է ուժեղացնեն իրենց ուշադրությունը առողջապահության մարմինների բյուջետային հանձնաժողովների աշխատանքի վրա: Այն վայրերում, ուր բյուջետային հանձնաժողովներ չեն կազմակերպված, անհրաժեշտ է միջոցներ ձեռք առնել այդպիսիները կազմակերպելու համար գոյություն ունեցող կանոնադրությունների հիման վրա:

23. Բժշկական օգնության բոլոր տեսակները պետք է հնարավորին չափ մոտեցնել ապահովագրվածներին, ընդ սմին այդ օգնությունը պետք է բավականաչափ վորակյալ լինի և պետք է հիմնվի լայն սոցիալ-պրոֆիլակտիկական միջոցների սիստեմի վրա: Վերջին տարիներս շնորհիվ արհմիությունների և ապգանձարկղների ազդեցության ապահովագրվածներին ցույց տրվող բժշկական օգնության գործում կան վորոշ նվաճումներ: Սակայն բժշկական օգնությունը դեռ շատ թերություններ ունի (ամբուլատորիաների ծանրաբեռնվածություն, մահճակալների ցանցի անբավարարություն):



Անհրաժեշտ է միջոցներ ձեռք առնել այն առթիվ, վորպեսզի ապահովագրվածներին բժշկական օգնություն հասցնելու ֆոնդի միջոցները բացառապես ըստ պատկանելույն ծախսվեն. վորպեսզի ապահովագրվածներին բժշկական օգնություն ցույց տալու համար բաց թողնվեն համապատասխան չափով միջոցներ տեղական և պետական բյուջեյից:

Պրոֆկազմակերպություններն ու ապմարմինները պետք է հետամուտ լինեն՝ մահճակալների ցանցն ընդլայնելու, մասնավորապես հիվանդանոցներում հիվանդ մայրերի փոքրահասակ յերեխաներին տեղավորելու համար բաժանմունքներ բանալու. կաբինետների քանակն ավելացնելու և ամբուլատորային ցույց տրվելիք օգնության վորակը լավացնելու. մաքսիմալ չափով միջոցներ հատկացնելու պրոֆիլակտիկային, առանց սակայն ի վնաս ապահովագրվածներին հասցվող բժշկական օգնության. ապահովագրվածներին դեղերով օգնություն ցույց տալու գործը լավացնել:

24. Հաշվի առնելով նոր տեսակի ապահովագրական բժշկական վերահսկողության մտցնելու կարճատև փորձը, վոր, ըստ յերևույթին, նպաստավոր արդյունք է տալիս, անհրաժեշտ համարել բժշկական վերահսկողության աշխատանքի խնամքով դիտելն ու ուսումնասիրելը, այդ աշխատանքին մասնակից դարձնելով լայն բանվորական մասսաները:

25. Անհրաժեշտ է՝ ապահովագրվածների թվի աճման համեմատ ավելացնել հանգստյան տների և սանատորիաների միջով անցկացվող ապահովագրվածների թիվը. խիստ կերպով հետևել սանատորիաները և հանգստյան տներն ուղարկվող բանվորների թվերի միջև սահմանված փոխ-հարաբերության նորմային. ուսումնասիրել սանատորիաներում և հանգստյան տներում սննդի ռացիոնալ կազմակերպման հարցը այն իմաստով, վոր սահմանվեն սննդի այնպիսի նորմաներ, վորոնք մաքսիմալ չափով օգտակար կերպով են յուրացվում օրգանիզմի կողմից. միջոցներ ձեռք առնել այնպիսի սանատորային ռեժիմ սահմանելու, վորի ժամանակ հիվանդները հնարավորություն ունենան բժշկության հետ միասին նաև կուլտուրական զվարճալիքներ ստանալու, առողջապահության խնդիրների հետ ծանոթանալու և այլն:

Սրա հետ միաժամանակ արհմիութենական և ապահովագրական մարմինները պետք է լայն բացատրական աշխատանք տանեն սանատորային-կուրորտային բժշկության, սանատորային ռեժիմի եյության մասին և այլն:

Անհրաժեշտ համարել յեկող բյուջետային տարվանից անցնել հանգստյան տներում հանգստացող մայրերի փոքրահասակ յերեխաների համար հատուկ բաժիններ չինելուն:

26. Անհրաժեշտ է ավելի մեծ ուշադրություն նվիրել սանատորիաների համար հիվանդներ ընտրելու խնդրին, ուղարկելով միայն այնպիսի հիվանդների, վորոնք կարող են իսկապես վոր լավացնել այնտեղ իրենց առողջական դրությունը և աշխատունակությունը վերականգնել: Այս նպատակով անհրաժեշտ է վերանայել սանատորիաները ուղարկելու համար հիվանդներ ընտրելու հրահանգը, այն ավելի ևս ճշտելու նպատակով:

27. Հաշվի առնելով թե՛ ԽՍՀՄ-ի և արտասահմանյան կուրորտներում յեղած մի քանի սանատորիաների և թե՛ գիշերային սանատորիաների փորձը, անհրաժեշտ է հարց հարուցել սանատորիաներում բժշկվելու սիստեմի մեջ փոփոխություն մտցնելու մասին աշխատանքային ռեժիմ մտցնելով և թոքախտավոր հիվանդների սանատորիայում մնալու ժամկետները յերկարացնելով:

28. Անհրաժեշտ է շարունակել սանատորիաների և հանգստյան տների վարչա-տնտեսական ծախսերը հետագայում ևս իջեցնելու աշխատանքը, միանգամայն առանց այդ անելու ի վնաս ապահովագրվածների սպասարկության վորակի:

29. Նկատի առնելով, վոր ներկայումս հանգստյան տների շինարարությունն ու հիմնական վերանորոգությունը կատարվում է առանց նախնական նախահաշիվների, գծանկարների, առանց այդպիսի տների կարիքը հաշվի առնելու, անհրաժեշտ է հենց այժմվանից սկսել թե սանատորային-կուրորտային ոգնության գործի և թե՛ հանգստյան տների ու սանատորիաների շինարարության, հիմնական վերանորոգության և կահավորման հնգամյա հեռանկարային պլանը կազմելու:

---



## «ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՑԻԱՅԻ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԱԽՖՍՀ-ՈՒՄ» ԶԵԿՈՒՑՄԱՆ ԱՌԹԻՎ

Համագումարը արձանագրելով ԱԽՖՍՀ-ի բանվորական կոոպերացիայի նշանակալից հաջողությունները (շրջանառության աճում, գների և ծախսերի իջեցում, փայատերերի թվի աճում), անհրաժեշտ է համարում հատկապես կանգ առնել հետևյալ հարցերի վրա:

1. Հակառակ բանվորական կոոպերատիվների փայատերերի թվի զգալի աճման, արհմիության անդամների կոոպերացման տոկոսը, մանավանդ Թիֆլիսում և Յերևանում, մնում է վոչ բավարար: Առ 1-ն հոկտեմբերի 1928 թվի կոոպերացման տոկոսը Բաքու, Թիֆլիս և Յերևան քաղաքներում պետք է հասցվի առնվազն 80 տոկոսի:

Անդրկ. Տ. Ս. Ը. և Կասպ. Տ. Ս. Ը. աշխատանքը յերկաթուղայինների և ջրային աշխատավորների կոոպերացման ասպարեզում հաջող է և անհրաժեշտ է մոտակա ժամանակներս յերկաթուղայինների կոոպերացումը հասցնել մինչև 100 տոկոսի:

2. Բանվորական կոոպերացիայի բոլոր կազմակերպություններում փաստորեն հավաքված միջին փայավճարը գերազանցել է 5 ռուբլին և ամենուրեք շարունակում է ավելանալ, բայց այնուամենայնիվ փայատիրական կապիտալները կոոպերատիվների հաշվեկշռի մեջ համեմատաբար աննշան տեղ են բռնում (միջին հաշվով մոտ 5 տոկոս): Նկատի առնելով շրջանառության շարունակվող արագ աճումը, բանվորական կոոպերացիայի սեփական միջոցները դառնում են միանգամայն անբավարար և նրանց հետագա մեծացումը գլխավորապես փայատիրական կապիտալների աճման գծով հանդիսանում է Բանվորական Կոոպերացիայի առաջնակարգ խնդիրը:

Այդ նպատակով անհրաժեշտ է բարձրացնել կանոնադրային փայավճարը մինչև 15 ռուբլի և վճռական միջոցներ ձեռք առնել փաստորեն հավաքված միջին փայավճարը հասցնելու առ 1-ն հոկտեմբերի 1928 թվի առնվազն 10 ռուբլու:

Փայավճարները մուծելու համար տրվող ժամկետների տևողությունը պետք է տատանվի համաձայն փայատերերի առանձին խմբերի ստացած աշխատավարձի, ընդ որին բանվորական կոոպերացիայի կողմից փայավճարները մուծելու ժամկետները պետք է համաձայնեցվեն արհմիությունների հետ:

3. Արհմիությունների դեռ չկոոպերացված անդամներին կոոպերացիայի մեջ ներգրավելու նպատակով, ինչպես և լրիվ փայավճարներ մուծելուն խթան հանդիսանալու համար, անհրաժեշտ է ամենուրեք պահպանել վաստակներից՝ վերցրած ապրանքի համար պրեմիա տալը իբրև փայատերերի նյութական շահագրգռվածության հիմնական ձևերից մեկը: Մի քանի բանկոոպներում նկատված ձգտումը վերցրած ապրանքի համար վաստակներից տրվող պրեմիան փայավճարի վրա յեկող դիվիդենտով փոխարինելու, համարել վոչ նպատակահարմար: Անհրաժեշտ է նմանապես պահպանել նաև դեֆիցիտային ապրանքները բացառապես փայատերերին բաց թողնելու գոյություն ունեցող կարգը:

4. Բանվորական կոոպերացիայի խանութային ցանցը 1926–27 թվ. ընթացքում մեծացել է 48,5 տոկոսով, բայց և այնպես, իբրև կանոն, բանվորական ռայոններն ու քաղաքների ծայրամասերը մնում են բավականաչափ չսպասարկված: Հետագայում անհրաժեշտ է պահպանելով գոյություն ունեցող խանութային ցանցը քաղաքների կենտրոնում, հատուկ ուշադրություն դարձնել բանվորական ռայոններին քաղաքների ծայրամասերին սպասարկելու վրա:

5. Նշելով բանվոր սպառողին կոոպերացիայի միջոցով սննդամթերքներ մատակարարելու ուժեղացումը, անհրաժեշտ գտնել այդ աշխատանքի հետագա զարգացումը, մանավանդ այն կոոպերատիվներում, ուր աշխատանքը գյուղատնտեսական մթերքների նկատմամբ մինչև այժմ բավարար չի յեղել: Անհրաժեշտ է նմանապես լավացնել մթերքներ ծախող խանութների առևտրի տեխնիկան, ավելացնելով վերջիններիս ցանցը բանվորական ռայոններում համաձայն ԽՍՀՄ-ի Առևտրի Ժողկոմատի:

6. Կուսակցության և կառավարության դիրեկտիվները արդյունաբերական ապրանքների գինը 10 տոկոսով իջեցնելու մասին ԱԽՖՍՀ-ի Բանվորական կոոպերացիան լրիվին իրագործել է: Սակայն, վերջին ամիսների ընթացքում նկատվում է կոոպերատիվ և մասնավոր շուկայի հաշվեկշռած գներով կազմված բյուջետային նարօրի արժեքի աճումը գյուղատնտեսական ապրանքների բնագավառում: Այդ աճումը հաղթահարելու համար բանվորական



կոոպերացիան պետք է ուժեղացնի բանվոր սպառողի բյուջեյի ընդգրկումը այն մասում, վոր ծախսվում է գյուղատնտեսական ապրանքներ ձեռք բերելու վրա և հետամուտ պետք է լինի գյուղատնտեսական ապրանքների գներն իջեցնելու՝ ավելացնելով իր սեփական մթերումները, կրճատելով վերադիր ծախսերը և սննդամթերքի առևտրի ռացիոնալացմամբ:

Անհրաժեշտ է ուժեղացնել բանվորների և ծառայողների բյուջեների պարբերական ուսումնասիրությունը աշխատանքի վիճակագրության մարմինների միջոցով: Բանվորական կոոպերատիվները պետք է արհմիությունների հետ միասին գործուն մասնակցություն ցույց տան այդ աշխատանքին: Բյուջեների ուսումնասիրության հիման վրա անհրաժեշտ է զարգացնել սպառողի ապրանքային սպասարկությունը համեմատ նրա իրական կարիքների: Սրա հետ միասին բյուջեների ուսումնասիրության հետևանքը պետք է լինի անհրաժեշտ ուղղումները մտցնելը ապրանքների հաշվեկշիռն ըստ նարօրի կազմելու նորմանների մեջ:

7. Գների իջեցման հետևանքով և առևտրա-կազմակերպչական ծախսերի անբավարար իջեցման պայմաններում, բանվորական կոոպերացիայի վաստակները զգալի չափով կրճատվել են, իսկ մի քանի կոոպերատիվներում նույնիսկ հայտնաբերվել է աշխատանքի վնասաբերությունը: Նորմալ կուտակումները պահպանելու և գների հետագա իջեցման (մանավանդ գյուղատնտեսական ապրանքներինը) հնարավորությունը պահպանելու նպատակով, բանվորական կոոպերացիան պետք է հետամուտ լինի ծախքերի մաքսիմալ կրճատման, վոչ մի դեպքում թույլ չտալով առևտրա-կազմակերպչական ծախքերի սահմանված նորմաներից դեն անցնելը: Նախահաշիվներում 1927–28 թվի համար ընդունված ադմինիստրատիվ-վարչական ծախքերի իջեցումը (միջին հաշվով 10,7 տոկոս) համարել անբավարար և առաջարկել բանվորական կոոպերացիային նախահաշվային յենթադրությունները կենսագործելիս միջոցներ ձեռք առնել ադմինիստրատիվ-վարչական ծախսերի հետագա կրճատման առթիվ:

8. Բանվորական կոոպերացիայի սկսած հիմնական շինարարությունը (պահեստներ, խանութներ, հացի գործարաններ, ճաշարաններ) պետք է շարունակվի, ընդ որին համաձայն ԱԽՖՍՀ-ի ժողովրդական տնտեսության հնգամյա պլանի անհրաժեշտ է նախատեսել բանվորական կոոպերացիայի ֆինանսավորումն այդ նպատակների համար: Բանվորական ավանների կառուցումը ծա-

վաճելիս պետք է նախատեսել կոոպերացիայի համար անհրաժեշտ շենքերի կառուցումը (խանութներ, ճաշարաններ և այլն)։

9. Անհրաժեշտ համարել, որ Անդր. կոոպ. Միությունը մըշակի մանր բանվորական կոոպերատիվներին փողով և ապրանքով վարկավորելու համար բազմապիսի ժամկետներ սահմանելու հընարավորության խնդիրը՝ հաշվի առնելով հեռավորությունն ու հաղորդակցության ճանապարհները։

10. Բանվորական վարկավորումը անհրաժեշտություն է առաջացնում ավելացնել կոոպերացիայի բանկային վարկավորումը, դանդաղեցնում է միջոցների շրջանառությունը և առաջ է բերում դեբիտորական պարտքերի աճում։ Այն ինչ կոոպերացիայի առաջ ժողովրդատնտեսական խնդիր է կանգնած ամեն կերպ կրճատել պետական միջոցների մեջ յեղած կարիքը այդպիսին դեպի արդյունաբերություն ուղղելու համար։ Այս նկատառումով բանվորական վարկավորումը հետագայում պետք է ըստ հնարավորին կրճատել։ Վարկավորումը պետք է պահել միայն խոշոր բանվորական կոոպերատիվներում (Բաքվի ԿԲԿ, Կասպ. ՏՍԸ, Թիֆլ. Միասկոոպ, Յերևանի Բանկոոպ և Անդր. Տ.Ս.Ը.)։ Վարկ կարելի յե տալ միայն փայավճարը լրիվ և ժամկետներին մուծողներին, ցածր աշխատավարձ ստացող աշխատողներին, ընդ որին վարկավորման իրավունք ունեցող կոնտինգենտը բանվորական կոոպերացիան պետք է սահմանի արհմիությունների հետ համաձայնեցնելով։

11. Հասարակական սննդի գործը լավացնելը հանդիսանում է բանվորական կոոպերացիայի կարևորագույն խնդիրներից մեկը։ Սակայն այդ աշխատանքը պահանջում է բանվորական կոոպերացիայից խոշոր միջոցների ծախսում և հաճախ մեծ վնասներ է պատճառում։ Այդ պատճառով, անհրաժեշտ է այդ նպատակով հավաքել հատուկ միջոցներ թե բանվորական կոոպերացիայի սեփական միջոցներից և թե՛ յերկարատև վարկավորման միջոցով, բոլոր հնարավոր միջոցները ձեռք առնելով վնասաբերությունը դադարեցնելու հասարակական սննդի ձեռնարկների ռացիոնալացման միջոցով և բանվորական կոոպերացիային այն բոլոր արտոնությունները տրամադրելով, ինչ որ վայելում է «Նարպիտ» ընկերությունը։

12. Նշելով կոոպերացված բանվորական մասսաների ակտիվության բարձրացումը և դրա հետ միասին բանվորական կոոպերատիվների կազմակերպչական աշխատանքի անբավարար վիճակը, անհրաժեշտ գտնել՝



ա) ամեն կերպ ուժեղացնել բանվորական կոոպերացիայի կազմակերպչական աշխատանքը, ձեռք առնելով բոլոր միջոցները բանվորական կոոպերատիվների հրահանգիչների որակը բարձրացնելու համար։

բ) վճռական միջոցներ ձեռք առնել կոոպերատիվ ակտիվի (լիազորների, խանութային հանձնաժողովների և այլն) աշխատանքի ղեկավարությունն ուժեղացնելու համար։

գ) ուժեղացնել կուլտ-լուսավորչական աշխատանքը և կոոպերատիվ պրոպագանդը կոոպերատիվ ակտիվի համար կարճատև դասընթացքներ կազմակերպելու, բանվորական կոոպերատիվներում կոոպերատիվ խմբակների և կոոպերատիվ անկյունների աշխատանքը ուժեղացնելու և այդ խմբակներին ու անկյուններին սիստեմատիկ կերպով ազգային լեզվով գրված մասսայական գրականություն մատակարարելու միջոցով։

դ) բանվորական կոոպերացիայի կոոպ-լուսավորչական աշխատանքի պլանները համաձայնեցնել արհմիությունների հետ։

Անդրկոոպմիությունը պետք է ուժեղացնի բանվորական կոոպերատիվների կազմակերպչական աշխատանքի ղեկավարությունը և կազմակերպի նրանց փորձի մշտական փոխանակություն, այսպիսով վերացնելով այն զանազանակերպությունը, որ գոյություն ունի բանվորական կոոպերատիվների կազմակերպչական աշխատանքի ձևերի և մեթոդների միջև։

13. Հարկավոր է վճռական միջոցներ ձեռք առնել դեռ ևս նկատվող կոպիտ և անուշադիր վերաբերմունքի դեպքերը ծախողների կողմից դեպի սպառողները և ընդհակառակը արմատախիլ անելու համար։ Այս նպատակով բանվորական կոոպերատիվների վարչությունները պետք է ուշադիր կերպով վերաբերվեն փաստերի գանգատներին և անուղղելի ծախողների վերաբերմամբ պատժական միջոցներ ձեռք առնեն։

Հաշվի առնելով ծախողների աշխատանքի մինչև այժմ ևս չըկարգավորված պայմանները (գերաշխատանք, չափազանց մեծ ծանրաբեռնվածություն, հերթերի առկայություն, առևտրական կետերի վոչ բավականաչափ հայթայթում մթերքներով և արդյունաբերական ապրանքներով և այլն), բանվորական կոոպերատիվների վարչություններին հարկավոր է մաքսիմալ ուշադրություն դարձնել ծախողների աշխատանքի պայմանները լավացնելու խնդիրներին, վերացնելու հերթերը, մատակարարումը լավացնելու և ամբողջ առևտրական ցանցի ռացիոնալացման համար իսկապես վոր միջոցներ ձեռք առնելու վրա։

Սրա հետ միասին պետք է բարձրացնել ծախողների վորակն ու կոոպերատիվ գիտակցությունը և հետամուտ լինել, վորպեսզի ծախողները տեղյակ լինեն իրենց կոոպերատիվի աշխատանքներին և կարողանան փայատերերին բացատրություններ տալ կոոպերատիվների տնտեսական գործունեության առանձին, կոնկրետ խնդիրների շուրջը (այս կամ այն ապրանքի բացակայությունը, գների փոփոխությունն և այլն):

14. Արձանագրելով բանվորական կոոպերատիվների կողմից համապատասխան արհմիությունների հետ բավարար չափով չըկապվելը և ընդհակառակը, անհրաժեշտ գտնել, վոր պրոֆկազմակերպությունները ուժեղացնեն իրենց ուշադրությունը դեպի բանկոոպների աշխատանքը թե նրանց կազմակերպչական կողմի և թե՛ նրանց առևտրական աշխատանքի բովանդակության վրա և վոր կոոպերատիվ կազմակերպությունները ձեռք առնվող բոլոր հիմնական միջոցները համաձայնեցնեն համապատասխան պրոֆկազմակերպությունների հետ, մանավանդ այն հարցերի առթիվ, վորոնք լայն բանվորական մասսաների քննության առարկա պիտի դառնան:

Առաջարկել Անդրկոոպմիության բանվորական կոոպերացիայի ղեկավարության ընթացքում ուժեղացնել կապը Անդրարհմխորհի հետ:



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐՀՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ VI ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ՎՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Հայաստանի Արհեստակցական միությունների 6-րդ համագումարը լսելով ընկ. Գողթունու զեկուցումը Հայաստանի Արհմիությունների Խորհրդի 5-ից մինչև 6-րդ համագումարը ունեցած գործունեության մասին, համարում է նրա վարած քաղաքական գիծը ճիշտ և հավանություն է տալիս տարած աշխատանքներին:

Համագումարն արձանագրում է, վոր հիշյալ ժամանակաշրջանում արհմիություններն ունեցել են հետևյալ նվաճումները.

Միությունները քանակապես աճել են, համեմատած անցյալի հետ հետազոտումների գործը վորոշ չափով լավացել է և դարձել է ծրագրային, միութենական առօրյա աշխատանքներին են ներգրավվել միության անդամների նորանոր կադրեր և ավելացել է միության ակտիվի քանակը, աճել և ամրացել են միությունների ֆինանսները ու սեփական միջոցներից ֆոնդերին արվելիք հատկացումների չափը ավելի բարձրացել է:

Հաշվետու ժամանակաշրջանում աճել է աշխատավարձը արտադրության վորոշ ճյուղերում և ժողկոմատների գծով հետ մնացած խմբակների նկատմամբ, հավաքական պայմանագրերի վերակնքման գործը տարվել է միութենական մասսայի ամենալայն և ակտիվ մասնակցությամբ, համեմատորեն լավացել է հանգստյանների և կուրորտասանատորային գործը, միութենական մարմինները այս տարի ավելի խոշոր գումարներ են հատկացրել այդ գործին:

Կուլտ կրթական աշխատանքները դարձել են բովանդակալից և բազմակողմանի, մասսայական աշխատանքները բարձրացել են, ուժեղացել են պրոֆլուսավորության աշխատանքները (դասընթացներ, կարճատև կուրսեր և այլն), աշխատանքներ են տարվել բանվորական կրթության ասպարեզում (Բանհամալսարան Ցերեկոնում):

Հիշյալ նվաճումներին զուգընթաց արհմիությունների աշխատանքների ասպարեզում տեղի յեն ունեցել հետևյալ զգալի թերությունները.

ա) ինքնաքննադատությունը միության լայն մասսաներում դեռ չի ծավալվել, միութենական ղեկավար մարմինները հարկավոր ուշադրություն չեն հայտնաբերել աշխատանքների ծավալման ասպարեզում.

բ) միություններին կից գոյություն ունեցող արտադրական սեկցիաները կտրված են միութենական առօրյա խնդիրների լուծման աշխատանքներից.

գ) մասսայական աշխատանքների ուժեղացման վերաբերյալ չեն ձեռնարկված հարկավոր միջոցներ և այդ աշխատանքները դեռ թույլ են:

դ) արտադրական և տնտեսական խորհրդակցությունները դեռ հեռու յեն հիմնարկ-ձեռնարկների ներքին տնտեսական կյանքի հիմնական ու խոշոր խնդիրների լուծման գործում ակտիվ դեր խաղալուց (արտադրության ռացիոնալիզացիայի, արտադրական, առևտրական ու ֆինանսական պլանների 5-ամյա և վերահսկիչ թըվերը կազմելու գործում ունենալիք մասնակցությունը, գործալըքումի և աշխատանքային դիսցիպլինայի խախտման դեմ ուղղված պայքարը և այլն).

ե) միութենական ստորին մարմինների և միութենական վողջ մասսայի մասնակցությունը տնտեսական խնդիրների լուծման գործում դեռ թույլ է. մասսայական տնտեսական աշխատանքները սակավին հեռու յեն բավարար լինելուց.

զ) ակումբային աշխատանքները դեռ չեն բավարարում միութենական մասսայի աճող պահանջներին. կուլտ աշխատանքները հիմնարկ-ձեռնարկներում դեռ թույլ են, բավարար չի տարված պրոֆակտիվի պատրաստման գործը, կուլտ աշխատանքների ասպարեզում անհրաժեշտ տեղ չեն ունեցել արտադրական լուսավորության խնդիրները: «Աշխատանք»-ը պարբերաբար չի հրատարակվում:

## ԲԱՆԱՁԵՎ՝ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐՀՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 6-ՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐՈՒՄ ՀԱՄԽ-Ի ԶԵԿՈՒՑՄԱՆ ԱՌԹԻՎ

Մեր տնտեսական կյանքի բեկման ներկա մոմենտում, վորը կապված է վերականգնման պրոցեսից ռեկոնստրուկտիվին անցնելու և այդ անցման դժվարությունների հետ, բանվոր դասակարգի առաջ դրված է վողջ արտադրության ու ժողովրդական տնտեսության ինդուստրացման և ռացիոնալացման ամենաբարձր և դժվարին խնդիրների լուծումը:



Նկատելով վոր վերոհիշյալ խնդիրների բարեհաջող լուծումից է կախված բանվոր դասակարգի և առհասարակ աշխատավոր շարքերի տնտեսական և կենցաղային պայմանների հետագա բարելավումը, արհմիություններից պահանջվում է հատուկ լարված աշխատանք՝ մասսաներին լայնորեն լուսավորելու, նրանց հետաքրքրությունը դեպի ամբողջ դասակարգի ընդհանուր խնդիրները բարձրացնելու, և բանվորական մասսաներին դեպի սոցիալիստական շինարարության մեծ գործը ել ավելի լայն չափով գրավելու ասպարեզում:

Սակայն վերակազմության շրջանի այդ խոշոր խնդիրները չեն կարող վճռվել, յեթե մասսաների կողմից վերահսկողության չենթարկվի ամբողջ ապարատը և չմաքրվի իր անպետք տարրերից:

Դրա հետ զուգընթաց արհմիությունների առաջ հրամայողական պահանջ է դրվում ել ավելի խորացնել իրենց աշխատանքը, լուրջ ուշադրություն դարձնել այն թերությունների և բացասական յերևույթների վրա, վորոնք կասեցնում են արհշարժման նորմալ ընթացքը:

Միայն այն ժամանակ միության անդամների նյութական և կենցաղային շահերը լավ կպաշտպանվեն, նրանց աճող կուլտուրական պահանջները կբավարարվեն, արտադրության վերաբերյալ հարցերը հաջող լուծում կստանան, յեթե արհմիություններում իշխի ներքին դեմոկրատիա և բոլոր թերությունների վերացումն անցնի առողջ ինքնաքննադատության բովով:

Արհմիությունները հետագայում պետք է՝

### ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՍՊԱՐԵԶՈՒՄ

1. Ներգրավեն միության անդամների լայն խավերը միութենական ակտիվ աշխատանքների մեջ, ապահովեն նրանց հսկողությունը և քննադատությունը արհմարմինների գործունեության և ձեռնարկումների վերաբերմամբ, հիշելով վոր ինքնաքննադատությունը այն զորեղ միջոցն է, վորով հնարավոր է պարզել և վերացնել թերությունները:

2. Ուժեղացնեն մասսայական աշխատանքները, ավելի լուրջ ուշադրություն դարձնելով միության անդամների կարիքների

սպասարկմանը, նկատի առնելով բանվորական ժողովների որոշումները և ժամանակին իրազեկ պահեն բանվորներին այդ որոշումների կատարման մասին:

3. Խոշոր ձեռնարկներում մասսայական աշխատանքները կենտրոնացնեն ցեխերում ու հերթով աշխատողների մեջ: Ամրացնեն ցեխային արհմարմինները, միաժամանակ թույլ չտան նրանց անջատումը գործարկոմներից: 1000-ից ավելի բանվորներ ունեցող ձեռնարկներում, ուր կան 3-ից ավելի ցեխեր, պետք է կազմակերպեն ցեխբյուրոներ և ցեխլիազորներ ընտրեն այն ձեռնարկություններում, ուր կան 500-ից ավելի բանվորներ.

4. Ավելի մոտեցնեն բոլոր միութենական մարմինները և նրանց աշխատողներին միութենական մասսաներին, ուժեղացնեն կապը նրանց հետ: Միութենական մարմինների կողմից անցկացվող կարևոր ձեռնարկումների (պայմանագրերի կամպանիա, վերընտրություններ և այլն) ժամանակ միության պատասխանատու աշխատողները պետք է լինեն տեղերում: Հաճախումները պետք է լինեն ավելի տևողական, որի ընթացքում պետք ուսումնասիրել տեղական աշխատանքի փորձը և օժանդակել թերությունների վերացման: Միութենական մարմինները ավելի հաճախակի պետք է հաշվետու լինեն միության անդամների առաջ:

5. Տեղական մարմինների ղեկավարության ուժեղացման տեսակետից՝ անհրաժեշտ է պատշաճ բարձրության վրա դնել հետազոտումների գործը: Հետազոտումների ընթացքում պետք է գլխավոր ուշադրություն դարձվի բանվորների աշխատանքի պայմանների, նրանց շարքերում գոյություն ունեցող տրամադրությունների և այն վերաբերմունքի վրա, որոնք կըհայտնաբերվեն միության անդամների կողմից դեպի միութենական մարմինները և նրանց առանձին ներկայացուցիչների գործունեությունը: Պետք է լավացնել հրահանգչական գործը: Ինքնաստուգման աշխատանքների ուժեղացումը արհմարմինների աշխատանքների ընթացքում պետք է գրավի խոշոր տեղ:

6. Ներկա պայմաններում պրոֆակտիվի խնդիրը միութենական լուրջ հարցերից մեկն է: Հատուկ ուշադրություն պետք է դարձնել նրա պատրաստման և դաստիարակման վրա: Ընթացիկ խնդիրները կստանան իրենց լուծումը միայն այն ժամանակ, յեթե կան համապատասխան որակյալ կադրեր: Ավելի պարբերական պիտի դարձնել պրոֆակտիվի ժողովները և խորհրդակցությունները, միութենական աշխատանքների կարևոր խնդիրների և բարձրագույն արհմարմինների հրահանգների ու որոշումների քննության համար: Անհրաժեշտ է ամենակարճ ժամանակամիջոցում կարգավորել պրոֆակտիվի որակի հաշվառման գործը:

7. Նշելով, որ վերջերս անդամավճարների գանձման գործը զգալի չափով թուլացել է, կտրուկ միջոցներ պետք է ձեռք առնվեն կանոնավորելու անդամավճարների գանձումը: Պետք է վերացնել նաև մինչ այժմ գոյություն ունեցող նախահաշվային դիսցիպլինայի խախտման դեպքերը: Վարչա-տեխնիկական ծախքերի կրճատման աշխատանքները պետք է շարունակել:

8. Վերջին ժամանակներս՝ շնորհիվ անփույթ վերաբերմունքի՝ միութենական նյութական միջոցների վատնման և յուրացման դեպքերը դեռևս շարունակվում են: Համագումարը արհմիություններին հրահանգում է ամենավճռական և կտրուկ միջոցներ ձեռք առնել միութենական միջոցներին անփույթ վերաբերվողների նկատմամբ:

9. Միութենական մարմինների վերստուգիչ հանձնաժողովների աշխատանքները դեռևս անբավարար են, անհրաժեշտ է հետագայում գումարել պարբերական խորհրդակցություններ, կատարել նրանց աշխատանքների հետազոտում՝ նպատակ ունենալով վերստուգիչ հանձնաժողովների աշխատանքները մտցնել կանոնավոր հունի մեջ:

10. Գյուղական աշխատավորների նորանոր կադրերի ընդգրկումը և նրանց աճումը դնում է Գյուղանտառ միության առաջ այդ կադրերի դաստիարակման և նրանց սպասարկելու գործի լավացման խնդիրը: Միջմիութենական մարմինները պետք է օժանդակեն Գյուղանտառ միությանն այդ աշխատանքների կազմակերպման գործում:

11. Սեզոնային բանվորների շրջանում միութենական աշխատանքները դեռ շատ թերություններ ունեն: Ավելի լուրջ ուշադրություն պետք է դարձնել սեզոնային բանվորների սպասարկման գործին թե սեզոնի և թե նրանց գործազրկության ընթացքում:

12. Առաջ քաշման աշխատանքները միությունների կողմից դեռևս վերջնականապես կազմակերպված չեն և կրում են պատահական բնույթ: Բացակայում է ուսումնասիրությունը և հաշվառումը: Հետագայում անհրաժեշտ է՝ հիմք ունենալով ՀԱՄԿԽ-ի 5-րդ պլենումի որոշումները առաջ քաշման մասին՝ առավելապես ուժեղացնել արհմարմինների աշխատանքները այդ ասպարեզում: Պետք է կանոնավորել հաշվետուումը, լայն բանվորական

մասսաներին մասնակից դարձնել առաջ քաշվողների թեկնածության քննարկման գործին, և հասարակական բնույթ տալ առաջ քաշման գործին: Միջոցներ ձեռք առնել առաջ քաշվողների ուսուցման և դաստիարակման համար: Առանձնապես ուշադրություն դարձնել կանանց, յերիտասարդների և ազգային փոքրամասնություններից նորանոր կադրեր առաջ քաշելու գործին:

13. Նկատի ունենալով ճարտարատեխնիկական սեկցիաների աշխատանքների թույլ լինելը և կտրվածությունը ընդհանուր միութենական աշխատանքներից, ուժեղացնել սեկցիաների ղեկավարությունը (քաղդաստիարակչական աշխատանքներ, պայքար համքյարական սահմանափակումների դեմ), կենդանացնել նրանց գործունեությունը, ներգրավել մասնագետներին ընդհանուր միութենական աշխատանքների մեջ: Միութենական մարմինները պետք է ուժեղացնեն ճարտարատեխնիկական սեկցիաներին տրվելիք նյութական օժանդակությունը:

14. Անհրաժեշտ է ուժեղացնել ղեկավարությունը ուսպրոֆկազմակերպությունների նկատմամբ: Պարբերաբար պետք է լսել նրանց զեկուցումները, հետևել ուսանողության հասարակական և ակադեմիկական աշխատանքներին ու աջակցել նրանց կենցաղային պայմանների բարվոքման գործին: Պետք է ուժեղացնել միութենական մարմինների կողմից ուսպրոֆկազմակերպություններին ցույց տրվելիք նյութական օժանդակությունը:

15. Խոշոր նշանակություն տալով ինֆորմացիային, որը մնում դեռևս թույլ է և չի ընդգրկում միութենական ամբողջ աշխատանքները, համագումարը առաջարկում է միջոցներ ձեռք առնել նրա ընդարձակմանն ու պատշաճ բարձրության վրա դնելու գործին:

16. Արհմիություններն անհրաժեշտ ուշադրություն չեն դարձնում փոխօգնության դրամարկղների գործունեությանը, ուստի աշխատանքները թուլացել են: ՓՕԴ-երը չեն ընդգրկում միության անդամների զգալի մասը, նրանց ֆինանսական գործունեությունը անբավարար է, բացակայում է պարբերական հաշվետվությունը անդամների առաջ, խորհուրդները համարյա թե չեն աշխատում, ՓՕԴ-երի աշխատանքները կարգավորելու և գործունեությունը ուժեղացնելու համար անհրաժեշտ է ձեռք առնել ամենակտրուկ միջոցները:

17. Համագումարը արձանագրում է, որ միութենական աշխատանքների հաշվառման ստատիստիկական ձևերը դեռ շատ են և բազմազան, ուստի հանձնարարում է ՀԱՄԽ-ին՝ համապատասխան վերադաս արհմարմինների առաջ խնդիր հարուցել կրճատելու և պարզեցնելու համար այդ ձևերը:

18. Արձանագրելով միացյալ ապարատի գործունեության, նրա գրությունների կատարման ձգձգումը, ապա նաև միության անդամների սպասարկման գործի անբավարար լինելը, համագումարը հանձնարարում է ՀԱՄԽ-ին ուսումնասիրել ապարատի գործունեությունը և վերջ տալ այդ թերություններին:

19. Միության մարմինների կողմից գործադուրկների մեջ տարվող աշխատանքները դեռևս թույլ են և կրում են պատահական բնույթ: Անհրաժեշտ է սիստեմատիկ աշխատանք տանել նրանց մեջ և լավացնել կազմակերպչական ու կուլտուրական սպասարկման գործը:

20. Միություններին կից գոյություն ունեցող սեկցիաների աշխատանքները առայժմ թույլ են: Սեկցիաների մասնակցությունը միութենական առօրյա աշխատանքներին դեռ անբավարար է: Բոլոր միություններին կից չեն կազմակերպված այն սեկցիաները, որի մասին հիշատակում է ՀԱՄԽ-ի և միության Կենտրոնական Կոմիտեների հրահանգը: Անհրաժեշտ է ավելի ուժեղացնել նրանց աշխատանքները, կապելով այդ միությունների առօրյա աշխատանքների հետ:

21. Կանանց և յերիտասարդության հատուկ կարիքների սպասարկումը դեռ բավարար չէ: Պետք է լավացնել այդ աշխատանքները միութենական ապարատների միջոցով, թույլ չտալ որ մասնավորապես յերիտսեկցիաների և ընդհանուր միութենական աշխատանքների միջև կտրվածություն ստեղծվի:

22. Անհրաժեշտ է ել ավելի լավացնել ազգային փոքրամասնությունների սպասարկումը, և առաջին հերթին ուշադրություն դարձնել ակտիվի առաջ քաշման վրա: Այն միություններում, որտեղ ազգային փոքրամասնությունները կազմում են զգալի տոկոս, անհրաժեշտ է ազատված աշխատողների թիվը ավելացնել (Լեռնագործներ, Գյուղանտառ):

## ՏԱՐԻՖ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՍՊԱՐԻԶՈՒՄ

1. Չնայած որ հաշվետու ժամանակաշրջանում արդյունաբերական հիմնական ճյուղերի աշխատավարձը զգալիորեն աճել է, այնուամենայնիվ այն համեմատաբար դեռ հետ է: Արհմարմինները պայմանագրերի վերակնքման ընթացքում պետք է վերացնեն այդ

անհամաչափությունը: Աշխատավարձի աճումը արդյունաբերության հիմնական ճյուղերում, պետք է լինի ավելի բարձր քան մյուս ճյուղերում: Լրիվ կերպով պիտի օգտագործել այն գումարները, վորոնք բաց են թողնված աշխատավարձի մեխանիկական բարձրացման համար:

Այն տեղերում, վորտեղ այդ նպատակի համար գումարներ բաց չեն թողնված, աշխատավարձի բարձրացումը պիտի կատարվի բանվորների արտադրանքի և արտադրողության աճման սահմաններում:

2. Արձանագրելով, վոր մի շարք ձեռնարկներում արտադրողության աճումը դեռ ցածր է և անցյալ տարի նրա աճման տեմպը վորոշ ձեռնարկներում յեղել է ցածր քան աշխատավարձի աճումը (Կաշեգործարան, Մետաղագործարան, Ջեթռճառ), արհմարմինները հետագա աշխատանքների ընթացքում պետք է կարգավորեն արտադրողության և աշխատավարձի աճման տեմպի համաչափությունը, նկատի ունենալով, վոր արտադրողության աճումը պետք է լինի ավելի բարձր քան աշխատավարձի աճումը:

3. Տարիֆային ռեֆորմը պիտի անցկացնել այն ձեռնարկություններում, ուր այն անցյալ պայմանագրերի վերակնքման ընթացքում կիրառված չի յեղել: Այդ աշխատանքները հաջող ավարտելու համար անհրաժեշտ է նախորոք լայն կերպով բացատրել բանվորներին ռեֆորմի եյությունն ու նպատակները, վերացնել անցյալում ռեֆորմն անցկացնելու ընթացքում յեղած սխալները:

4. Գործարքի նորմաների վերանայումը չպետք է կատարվի պայմանագրերի վերակնքման հետ միասին, այլ առանձին ծրագրված կերպով և պայմանագրերի տևողության ընթացքում (առանձին գործարան-ձեռնարկներում, վորտեղ կան նորմաների սահմանման սխալ ու աղաղակող փաստեր, այդտեղ միայն կարող են վերանայվել նորմաները): Վերանայված նորմաները և գնահատումները պետք է սահմանվեն մի տարի ժամանակով: Պայմանագրերում նախատեսնել միայն գործարքի նորմաների և գնահատումների վորոշելու ընդհանուր սկզբունքները: Անհրաժեշտ է միջոցներ ձեռք առնել նորմիրովկայի աշխատանքները ձեռնարկություններում կանոնավորելու համար: Հանձնարարել ՀԱՄԽ-ին ուսումնասիրել աշխատանքի տեխնիկական չափավորման աշխատանքները գործարաններում և ըստ այնմ միջոցներ ձեռնարկել կարգավորելու այն:

5. Պայմանագրերի վերակնքման աշխատանքները միություն-



ների տարիֆ աշխատանքների հիմնական խնդիրներից մեկն են: Արհմարմինները պետք է ուշադրություն դարձնեն այդ աշխատանքները ավելի լավ նախապատրաստելու, ավելի լրիվ կերպով մասնակից դարձնելու միության անդամներին պայմանագրերի քննության և վերակնքման բոլոր շրջանների աշխատանքներին: Պայմանագրերը պետք է ընդգրկեն միության բոլոր անդամներին: Առանձնապես պիտի հետևել կնքված պայմանագրերի լրիվ կատարմանը:

6. Համագումարը անհրաժեշտ է համարում տեղական բյուջեյի մեջ մտնող հիմնարկներում պետ-չափավորման անցնելու աշխատանքներն արագացնել այն հաշվով, վոր մինչև փետրվարը 1929 թ. աշխատանքներն ավարտվեն հանրապետության սահմաններում:

7. Չնայած նրան, վոր 1928–29 թ. բյուջեյով բարձրացված է ուսուցիչների, բուժ-պերսոնալի և միլիցիայի աշխատավարձը, այնուամենայնիվ այդ խմբակների աշխատավարձը դեռ հետ է մնում: Միությունները պետք է հարց հարուցեն այդ աշխատողների աշխատավարձի հետագա բարձրացման մասին: Համագումարը հանձնարարում է ՀԱՄԽ-ին աշխատել 1929–30 թ. բյուջեյում նախատեսնել ուսուցիչների, բուժպերսոնալի և միլիցիոներների աշխատավարձի պարբերական հավելումները իրականացնելու համար անհրաժեշտ գումարներ:

8. Աշխատանքի պաշտպանությունը դեռ ևս անհրաժեշտ բարձրության վրա չէ: Անհրաժեշտ է ուժեղացնել աշխատեսչության հսկողությունը, կենդանացնել աշխպաշտպանության հանձնաժողովների գործունեությունը և հետևել, վոր աշխատանքի սանիտարական պայմանները բարելավելու համար նախատեսնված գումարները ժամանակին և նպատակին գործադրվեն: Առանձնապես պետք է ուշադրություն դարձնել մասնավոր ձեռնարկներում աշխատող բանվոր-ծառայողների աշխատանքի պաշտպանության խնդիրների վրա:

9. Յերկրի ինդուստրիալիզացիայի, արդյունաբերության, առևտրական ու վարչական ապարատի ռացիոնալիզացիայի իրագործման, ինքնարժեքի իջեցման գործի հաջողության համար արհմարմինները պետք է զարգացնեն և լավացնեն մասսայական տնտեսական աշխատանքները, վոր մինչև այժմ կաղում եյին միութենական աշխատանքների թույլ կողմերից մեկը: Անհրաժեշտ է «արտադրական խորհրդակցությունների և ժամանակավոր վերա-

հսկիչ հանձնաժողովների միջոցով կազմակերպել բանվորների մասսայական հսկողություն տնտեսական շինարարության ծրագրերի իրագործման նկատմամբ և վճռականորեն ներգրավել բանվորական մասսաներին արտադրության ղեկավարման գործում» (ՀԱՄԿԽ-ի ինֆորմացիոն նամակ № 9):

Արհմարմինները պետք է ուժեղացնեն արտադրական և տնտեսական խորհրդակցությունների ղեկավարությունը, պետք է գումարեն արտադրական կոնֆերենցիաներ, կատարեն պարբերական ստուգումներ արտադրական խորհրդակցությունների առաջարկությունների իրագործումը պարզելու համար (3 ամիսը մեկ անգամ): Պետք է հետևեն, վոր կիրառվեն ընդունված բայց չիրագործված առաջարկները:

10. Մինչև այժմ գործարաններին կից չեն ստեղծված գյուտարարության աջակցող ֆոնդեր, չի կարգավորված բանվորների պարգևատրումը, բանվորական գյուտարարության խնդիրները միությունների և տնտեսական մարմինների աշխատանքներում հարկավոր տեղ չեն գտել: Համագումարը հանձնարարում է ՀԱՄԽ-ին ամենակտրուկ միջոցներ ձեռք առնել, այդ խնդիրները կարգավորելու համար: Ստեղծել գյուտարարության ֆոնդեր, ուժեղացնել բանվորների պարգևատրումը և այլն:

11. Արհմարմիններն իրենց տնտեսական աշխատանքների ընթացքում վոչ միայն պիտի մասնակցեն արտ-ֆին պլանների, հիմնական ներդրումների աշխատանքներին, նոր արդյունաբերական շինարարության ծրագրի մշակման և այլն, այլ նաև պետք է հետևեն այդ ծրագրերի ճշգրիտ իրագործմանն ու նյութական միջոցների ժամանակին և նպատակին գործադրմանը:

12. Համագումարն արձանագրում է, վոր տնայնագործ յերիտասարդության աշխատանքի պաշտպանության գործը գտնվում է անմխիթար դրության մեջ: Անհրաժեշտ է այս աշխատանքներին դարձնել լուրջ ուշադրություն, աշխժողկոմատի միջոցով արագացնել նրանց աշխատանքի պայմանների հետազոտումները և հայտնաբերված թերությունների դեմ ձեռք առնել ամենակտրուկ միջոցներ, բարելավել նրանց աշխատանքի պաշտպանության և տնտեսական դրությունը:

13. Նկատի ունենալով կենսամթերքների մատակարարման գործում գոյություն ունեցող վորոշ դժվարությունները, արհմարմինները պետք է ուժեղացնեն իրենց մասնակցությունը մատակարարող և կարգավորող մարմինների աշխատանքներին: Պետք



է պարզաբանել միության անդամներին այն ձեռնարկումները, վորոնք կիրառվում են հիշյալ մարմինների կողմից: Անհրաժեշտ է նաև ուժեղացնել մասսաների մասնակցությունը կոոպերատիվ աշխատանքներին:

14. 7-ժամյա բանվորական օրվա իրագործման գործին արհմիությունները պետք է մասնակցեն ամենաակտիվ կերպով: Պետք է աջակցել, վոր նախապատրաստական աշխատանքներն ավարտվեն ժամանակին, պարզել, թե այս կամ այն ձեռնարկությունը վորքան նախապատրաստված է անցնելու 7-ժամյա բանվորական օրվան: Պետք է այդ խնդիրները բանվորական ժողովներում լայնորեն քննության առնվեն:

15. Ժամանակավոր վերահսկիչ հանձնաժողովների կազմակերպումը մեզ մոտ ընթանում է չափազանց թույլ, չնայած այդ առթիվ կայացած մի շարք վորոշումներին: Համագումարը հանձնարարում է ՀԱՄԽ-ին ամենակարճ ժամանակամիջոցում ձեռնարկել ժամանակավոր վերահսկիչ հանձնաժողովների կազմակերպման աշխատանքներին, ունենալ ուժեղ ղեկավարություն նրանց աշխատանքների կարգավորման գործում:

16. Չնայած նրան, վոր բնակարանային շինարարությանը բաց թողնվող գումարները տարեց-տարի աճում են, սակայն և այնպես այդ շինարարությունը չի կարողանում բավարարել ինչպես բանվորաշատ վայրերի, նույնպես և քաղաքների բանվորական մասսաների բնակարանային պահանջները: Համագումարը հանձնարարում է միջոցներ ձեռք առնել ուժեղացնելու բնակարանային շինարարության բաց թողնվելիք միջոցները և հսկել, վոր դրանք ժամանակին ու անմիջական նպատակներին օգտագործվեն: Ուժեղացնել Բնակշինկոոպի միության աշխատանքները, տարածելով նրա գործունեությունը գավառներում և բանվորական վայրերում:

17. Նշելով, վոր մինչ այժմ չի հրատարակված աշխատավորական և կուլակային տնտեսությունների հատկանիշները բնորոշող օրենք, վորպիսինի բացակայությունը զգալիորեն անդրադառնում է բատրակների աշխատանքի պայմանների և աշխատավարձի խնդիրների կարգավորման գործի վրա, համագումարը հանձնարարում է ՀԱՄԽ-ին միջոցներ ձեռք առնել այդ օրենքը համապատասխան մարմինների կողմից ամենակարճ ժամանակամիջոցում հրատարակելու համար:

18. Համագումարը արձանագրելով, վոր բատրակների ապահովագրման գործը ընթանում է չափազանց դանդաղ, հանձնա-

զարում է Հանրապետական Սոցապգանձարկղին արագացնել բատրակների ապահովագրման օրենքի կիրառումը։ Այս աշխատանքները պետք է տանել Գյուղանտառ միության անմիջական մասնակցությամբ։

Համագումարը հանձնարարում է Հանրապետական Սոցապգանձարկղի Կոմիտեյին ուժեղացնել ապահովագրական պատգամավորների ինստիտուտի և կոմիտեների պլենումի աշխատանքները։ Վերջիններիս նիստում պետք է քննության դնել ապահովագրական խնդիրների պրակտիկ հարցերը։

Նշելով ապահովագրական մուծումների գանձման ասպարեզում ունեցած նվաճումները, հանձնարարել Սոցապգանձարկղի Կոմիտեյին էլ ավելի ուժեղացնել նրանց կանոնավոր ու ժամանակին գանձելու աշխատանքները, և ձեռնարկել կտրուկ միջոցների՝ ամբողջովին վերացնելու ապահովագրական պարտքերը։ Անհրաժեշտ դեպքերում պատասխանատվության յենթարկել ինչպես պարտքերը չմուծողներին, նույնպես և ապահովագրական հատկացումները ժամանակին չկատարողներին։

19. Գործազրկության դեմ պայքարելու խնդիրը հանդիսանում է արհմիությունների, մասնավորապես պետության ուշադրության կենտրոնական առարկան։ Համագումարը գտնում է, վոր նրա դեմ պայքար մղելու համար բոլոր գծերով հատկացվող գումարները (պետական և տեղական բյուջեներ, սոցապմարմիններ) անկախ գործազրկության քանակի նվազեցման չափից պիտի ավելացվեն, վորպեսզի հնարավոր լինի մինչ այժմ կիրառվող ձեռնարկումները ընդարձակել, աշխատանքային օգնության կարգով ավելի շատ գործազուրկներ ընդգրկել և այլն։ Միությունների կողմից նյութական օժանդակություն պետք է տալ այն գործազուրկներին, վորոնք իրոք կարիք են զգում և չեն ապահովագրված սոցապգանձարկղներում։

20. Աշխբորսաները պետք է ուժեղացնեն իրենց հսկողությունը աշխատանքի շուկայի կարգավորման գործում, կնքեն հիմնարկ-ձեռնարկների հետ բանվորական ուժ տրամադրելու համար պայմանագրեր և հետևեն նրանց կիրառմանը։

## ԿՈՒԼՏ-ԿՐԹԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՍՊԱՐԻԶՈՒՄ

1. Արհմիությունների կուլտ աշխատանքները կարևոր միջոց են լայն մասսաներին մեր սոցիալիստական և կուլտուրական շինարարությանը կապելու, և նրանց սոցիալիստական վերադաստիա-



րակման յենթարկելու։ ՀԱՄԽ-ը պետք է էլ ավելի ուժեղացնի արհմիությունների կուլտաշխատանքների ղեկավարությունը։ Պիտի հսկել, վոր կուլտաշխատանքներն ունենան հետևողական, պարզ և վորոշ քաղաքական ղղվածք, և բխեն մեր քաղաքական, տնտեսական և կուլտուրական հերթական խնդիրներից։

2. Այժմ, յերբ պրոլետարիատի հարձակումն ուժեղանում է ընդդեմ մեր տնտեսության կապիտալիստական տարրերի, այսինքն կուլակի ու նեպմանի, արհմիությունները լայն աշխատանք պետք է ծավալեն և մասսաների գիտակցությունը զինեն ընդդեմ բուրժուական գաղափարախոսությունների, ընդդեմ հին ազդեցությունների և մնացորդների (հասարակական պասիվություն, շովինիզմ, մեշչանականություն, կրոն, ալկոհոլիզմ, խուլիգանություն և այլն)։ Արհմիությունները միաժամանակ յեռանդուն կերպով պիտի ծավալեն ինքնաքննադատությունը։ Խորհրդային, տնտեսական, արհեստակցական և իդեոլոգիական խնդիրների լայն ժողովրդականացման հետ միասին, նրանք յերևան պիտի բերեն մասսաների գործնական աջակցությունը և հսկողությունը մեր շինարարության և կուլտ աշխատանքներին։

3. Արհմիությունների աշխատանքները ինտելիգենցիայի մեջ դեռ թույլ են։ Միութենական-արտադրական սեկցիաները չեն սպասարկում մասնագետներին, չունեն հասարակայնություն։ Գյուղուսուցչության, բժիշկների, հողաչափների մեջ առանձին կուլտ աշխատանքներ չեն տարվում։ ՀԱՄԽ-ը և առանձին միությունները հատուկ միջոցների պետք է դիմեն, կենդանացնելու հիշված սեկցիաների կուլտ աշխատանքները, և նրանց հատուկ միջոցներ պետք է տրամադրեն։ Բացի դրանից անհրաժեշտ է առաջիկայում, ինտելիգենցիայի և մասնագիտական ուժերի առանձին խմբակների քննության նյութ դարձնել քաղաքական, տնտեսական և կուլտ աշխատանքների հիմնական խնդիրները, նրանց այդ աշխատանքների մեջ ներգրավելու նպատակով։

4. Մեր ակումբային աշխատանքները չեն բավարարում բանվորության աճող պահանջներին։ Միությունների ղեկավարությունը թույլ է, չկան ակումբային վորակյալ աշխատավորներ։ Անհրաժեշտ է՝ Յերևանում և Լենինականում կառուցել մեկական խոշոր բանվորական կենտրոնական ակումբներ։ Գալ տարվանից անպայման կառուցել՝ Տեքստիլ գործարանի, Ալլահվերդու և Ղափանի ակումբները և վերանորոգել գավառներում գոյություն ունեցող ակումբները։

Միությունների անմիջական ղեկավարությունը ակումբային աշխատանքներին պիտի լինի կենդանի: Կենտվարչությունները, գավառբյուրոները ՀԱՄԽ-ին պարբերաբար պիտի զեկուցեն իրենց ակումբներում կատարված աշխատանքների մասին:

5. Ակումբները գեղարվեստական աշխատանքի միջոցով պիտի կազմակերպեն մասսաների հանգիստը և գեղարվեստական կրթություն տան նրանց: Սակայն յեղած դրությունը շատ հեռու չէ բանվորության գեղարվեստական պահանջները բավարարելուց, ուստի պետք է ուժեղացնել՝ թատերական, յերաժշտական մասսայական աշխատանքները, կարգավորել բանվորական բեմերը: Լուսժողկոմատի միջոցով անհրաժեշտ է հրատարակել թատերական ու յերաժշտական գրականություն, խիստ պայքար պետք է մղել խալտուրայի դեմ:

6. Արհմիությունները հենվելով բանվորական ակտիվի, պատգամավորների և կոմսոմոլի վրա, հետևողական պայքար պետք է մղեն բուրժուական կենցաղի մնացորդների դեմ (ալկոհոլիզմ, խուլիգանություն, և այլն): Նրանք նոր կենցաղի ամրապնդման համար, բանվորական բնակարաններում, հանրակացարաններում, կազարմաներում պիտի կազմակերպեն կարմիր անկյուններ, մանկան մսուրներ, հիմնավորապես դնեն կուլտուր-կենցաղային աշխատանքները (կոլեկտիվ կերպով թատրոն, կինո հաճախել, օգտագործել ռադիոն և այլն): Արհմիությունները ագիտացիա պիտի մղեն ու գործնական միջոցների ձեռնարկեն՝ կոոպերացիայի ու այլ կազմակերպությունների աջակցությամբ՝ նոր կենցաղի ոգին (բանվորական ճաշարանների կազմակերպում և ընդլայնում, ֆաբրիկ խոհանոցների կազմակերպում, խորհրդային թեյարաններ և այլն):

7. Բանվորության արհեստագիտական կրթության գործին մինչ այժմ պահանջված ուշադրություն չի դարձվել: Արդյունաբերության և շինարարության գծով անհրաժեշտ են հսկայական չափերով բանվորական որակյալ ուժեր, սակայն գործնականում Լուսժողկոմատը, Աշխժողկոմատը և Ժողտնտխորհը քիչ բան են արել այդ պահանջը լրացնելու համար: Անհրաժեշտ է Տեքստիլ գործարանին կից բաց անել Ֆաբգործուս, Ալլահվերդում և Ղափանում բանալ լեռնգործուսներ, Աշխժողկոմատի միջոցով բանալ շինարարական և վերապատրաստման դասընթացքներ, կազմակերպել բրիգադային և անհատական աշակերտության գործը: Արհեստագիտական մասսայական գրականության պահանջը շատ մեծ է:



Անհրաժեշտ է Պետհրատի միջոցով սկսել այդ սերիայի հրատարակությունը: Միաժամանակ ակումբներում և կարմիր անկյուններում հիմնավոր կերպով դնել արտադրական լուսավորությունը:

Հանրակրթական աշխատանքը նույնպես բավարար կերպով չի դրված: Պետք է ընդարձակել Քաղլուսվարի բարձր տիպի դպրոցական ցանցը: Ղափանում, Ալլահվերդում, Տեքստիլին կից և մյուս բանվորական վայրերում անպայման կազմակերպել այդ տիպի դպրոցներ: Առաջիկա տարում Լենինականում պետք է բանալ բանվորական համալսարան, խոշոր արդյունաբերական ձեռնարկներին կից բացել գիշերային դպրոցներ. ուժեղացնել բանվոր-յերիտասարդության հանրակրթական գործը: Քաղլուսվարի և ՀԱՄԽ-ի միջոցով անհրաժեշտ է կազմակերպել ինքնազարգացման գործը:

9. Արհմիութենական ակտիվի վերապատրաստման աշխատանքները միությունների կուլտ աշխատանքների մեջ էական տեղ պետք է բռնեն: Անհրաժեշտ է կազմակերպել յերկարատև դասընթացներ պրոֆակտիվի և կուլտ աշխատողների, և կարճատև, նպատակային դասընթացքներ միութենական ակտիվի համար:

10. Գրադարանային աշխատանքները անբավարար են: Չկա մատչելի գրականություն, գրադարաններում չի տարվում քաղլուսվարական աշխատանք. գրադարանային աշխատողների կազմը անվորակ է: Անհրաժեշտ է Պետհրատի միջոցով հրատարակել մասսայական էժան գրականություն, ՀԱՄԽ-ի միջոցով՝ պրոֆգրականություն: Անհրաժեշտ է Պետհրատի գրականությունից միանվագ ֆոնդ կազմել և վարկով բաշխել բանվորական կուլտ հիմնարկներին: Քաղլուսվարչության գծով պետք է բանալ գրադարանային դասընթացքներ: Անհրաժեշտ է ազգային փոքրամասնություններին մատչելի լեզվով գրականություն մատակարարել:

11. Նշելով պրոֆեսիոնալ մամուլի («Աշխատանք», «Բատրակ») կարևոր դերն ու նշանակությունը, համագումարը անհրաժեշտ է համարում նրանց բովանդակությունը ավելի հարստացնել և ավելի մասսայականացնել: ՀԱՄԽ-ը և բոլոր կենտվարչությունները ռեալ միջոցների պիտի դիմեն «Աշխատանք»-ը նյութապես ապահովելու և նրա հրատարակումը դարձնելու յերկշաբաթյա: Հատուկ նշանակություն տալով պատի թերթերին, անհրաժեշտ է ուժեղացնել նրանց խմբկոմներին: Պատի թերթերը պետք է դարձնել հիմնարկ-ձեռնարկների արտադրական խնդիրների և մասսայական աշխատանքների արտահայտիչը:

12. Արհմիությունների կուլտ աշխատանքները ազգային փոքրամասնությունների մեջ թույլ են, ուստի առաջիկայում անհրաժեշտ է մի շարք գործնական միջոցների դիմել ուժեղացնելու այդ աշխատանքները: Ակումբների և կարմիր անկյունների գծով պետք է կազմակերպվի ազգային փոքրամասնությունների կուլտ պահանջների սպասարկումը:

13. Ֆիզկուլտուրայի հետագա զարգացումը և մասսայականացումը ապահովելու համար անհրաժեշտ է ուժեղացնել արհմիությունների ղեկավարությունը, նյութական միջոցներ և հարմարություններ տրամադրելով Ֆիզկուլտուրային, (սպորտ-հրապարակներ, մարզադահլիճներ կառուցելու և սպորտ-ինվենտար ձեռք բերելու համար): ՀԱՄԽ-ի միջոցով պետք է պատրաստել ֆիզկուլտ խմբավարներ և ուժեղացնել ծրագրամեթոդային ղեկավարման գործը, տալով Ֆիզկուլտուրային ռազմական թեքում:

14. Արհմիությունների գծով անգրագիտության վերացման աշխատանքների տեմպը թուլացել է: Անհրաժեշտ է վճռական միջոցների դիմել, վորպեսզի մինչև հաջորդ համագումարը վերջնականապես վերացվի անգրագիտությունը: ՀԱՄԽ-ը և գավարհբյուրոները պետք է ձգտեն քաղլուսամարմինների բյուջեներով ավելի խոշոր միջոցներ հատկացնել՝ և ավելի մեծ քանակով միության անդամներ ընդգրկեն քաղլուսավարական դպրոցների ցանցում: Կիսագրագիտության թիվը արհմիություններում շատ խոշոր է (մոտ 20%). Հատուկ ուշադրություն պետք է դարձնել այդ աշխատանքներին, ավելի շատ միջոցներ և ուժեր տրամադրել կիսագրագիտությունն արագ և հաջող կերպով լիկվիդացիայի յենթարկելու:

15. Ռադիոն դեռ լրիվ չափով չի օգտագործվում արհկազմակերպությունների կողմից: Անհրաժեշտ է կուլտ բաժնին կից կազմակերպել ռադիո-կոնսուլտացիա, կանոնավորել հաղորդման աշխատանքները, կազմակերպել [illegible] խմբակներ:

ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ
անվան



# ՑԱՆԿ

## ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ԱՐՀՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ IV ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ՎՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

I. ԱՆԴՐԱՐՀՄԽՈՐՀՐԴԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԱՌԹԻՎ . . . ԵՋ
1. Կազմակերպչական աշխատանքի առթիվ . . . . . 3
2. Կուլտ-կրթական աշխատանքի առթիվ . . . . . 10
3. Տարիֆ-տնտեսական աշխատանքի առթիվ . . . . 18

II. ԱԽՖՍՀ-Ի ԱՇԽԺՈՂԿՈՄԱՏԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԱՌԹԻՎ . 24
1. Աշխատանքի պաշտպանության առթիվ . . . . 25
2. Աշխատանքի շուկան կանոնավորելու առթիվ . . 30
3. Տարիֆ-կոնֆլիկտային աշխատանքի առթիվ . . 32
4. Բնակարանային-բնակշինարարության առթիվ . . 33

III. «ՍՈՑ. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԱԽՖՍՀ-ՈՒՄ» ԶԵԿՈՒՑՄԱՆ ԱՌԹԻՎ . . . . . . . . . . . . . 35

IV. «ԲԱՆՎ. ԿՈՈՊԵՐԱՑԻԱՅԻ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԱԽՖՍՀ-ՈՒՄ» ԶԵԿՈՒՑՄԱՆ ԱՌԹԻՎ . . . . . . . . . . 43

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐՀՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ VI ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ՎՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

I. ԲԱՆԱԶԵՎ՝ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՀԱՄԽ-Ի ԶԵԿՈՒՑՄԱՆ ԱՌԹԻՎ . 50
1. Կազմակերպչական աշխատանքների ասպարեզում . 51
2. Տարիֆ-տնտեսական աշխատանքների ասպարեզում . 56
3. Կուլտ-կրթական աշխատանքների ասպարեզում . 61

ՀՀ Ազգային գրադարան
NL0193078

ԳԻՆԸ 60 ԿՈՊ.